



5(698)
2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հրանտ Մաթևոսյան մշակութային կենտրոնն քանգարանում ենք: Արտաքին և ներքին տեսքից հիացած են, երբ ներսի աջ ու ձախ կողմերում մեզ «ողջունում են» դասական երկու մեծերը՝ լոռեցիներ Չովհաննես Թումանյանն ու Հրանտ Մաթևոսյանը:

Շնորհակալական զգացումով էի լցված մտերիմ անձնավորության՝ Թումանյանի քանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղարախանյանի հանդեպ, որին տեսնելու առիթն էր նաև ինձ տարել «Զապել Եսայան-Չովհաննես Թումանյան...» միջոցառմանը:

Անակնկալով մեծ էր, երբ քանգարանում հանդիպեցի արցախցիների՝ «Լուսարար» թերթի խմբագիր Սվետլանա Խաչատրյանին, Արցախի վաստակաշատ մանկավարժ Սուրայա Ղազարյանին, Ֆք ընկեր Ռուզաննա Խաչատրյանին:

Թերևս ողջունելի էր, որ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնաթերթը շարունակում է լույս սփռել մեր շուրջը մայր երկրում բարեգործական նախաձեռնությամբ:

Եսայան կին գրողի մասին խոսել, նշանակում է վերհիշել նրա հայտնի խոսքերը, որ միշտ ինձ հետ են, ինձ ուղեկից.

«Կինը աշխարհի չէ եկած միակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական եւ ֆիզիքական յատկությունները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն խտալը միայն հաճելի ըլլալը պետք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործոն բարերար տարր մը դառնալը»:

Այն պատկերացումն էր, որ գնում էի երախտագիտությամբ լցված խոսքս հնչեցնելու արևմտահայ գրողին՝ այդ խոսքերի, այն նվիրական գաղափար-

ների համար, որին զոհ գնաց նա: Փրկված լինելով Հայոց ցեղասպանությունից՝ նա դարձավ ստալինյան անձի պաշտամունքի զոհը, ըստ որոշ աղբյուրների՝ իր մահկանացուն կնքելով Բաքվի բանտում:

Հիշողության մեջ տարիներ առաջվա իմ աշակերտուհին էր՝ Տաթևիկ

մասին գրած այս տողերը համահունչ են Ձեր կերպարին, Դուք էլ ըմբոստ եք, պայքարող... Հարմար են գտնում այն նվիրել Ձեզ»:

Կորցրած հայրենիքի, իմ հեղինակած գրքերի և շատ արժեքների կողքին Մարտակերտի իմ բնակարանում մնաց նաև այդ հուշանվերը, երբ անցած տարվա սեպտեմբերի 20-ին հրետակոծության տակ դուրս եկանք հայրենի քաղաքից՝ առանց գիտակցելու, որ վերադարձ չկա: Ափսոսանքս մեծ է նաև այդ նվերի կորստյան համար, որի մասին հուզված շարեցի տողերս, երբ Եսայան-Թումանյան առնչության ու նամակագրության կապը իմ մտածումներում արդիականացավ, ու նոր օրերի լույսի տակ Արցախի կորուստն աղաղակեց արյանս երակներում:



Թանգարանից դուրս նայեցի երկնքին՝ թումանյանական խոսքերը հիշելով. «Երկնքին էլ նայեցեք: Եվ հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա, ձեր սիրտը կազնվանա և ձեր հայացքը կխորանա ու կլայնանա...»:

Մանգարանից դուրս նայեցի երկնքին՝ թումանյանական խոսքերը հիշելով. «Երկնքին էլ նայեցեք: Եվ հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա, ձեր սիրտը կազնվանա և ձեր հայացքը կխորանա ու կլայնանա...»:

Հայոց մայրաքաղաքում էի, բայց մտքերով Արցախում, ինչպես Ջապել Եսայան գրողը, որը հայրենի կորցնելուց հետո իր կյանքը ապրեց Սիլիստարի պարտեզների հիշատակով: «Իմ կեանքի ընթացքին տեսած են շատ երկիրներ եւ վայելած են բնութեան բազմատեսակ գեղեցկություններ, բայց Սիլիստարի պարտեզներու յիշատակը մնացած է անջնջելի: Ինձ հետ տարեր են ամենուրեք այդ պարտեզները եւ ամեն մեջ ապաստաներ են ամեն անգամ, երբ մութ եւ սպառնական ամպեր կուտակուր են իմ կեանքիս հորիզոնին վրայ»:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ



«Լուսարար»-ը հետաքրքիր գրուցակից է ամենուր, նաև՝ Կրաստանում: Լուսանկարն արվել է Թբիլիսիի հայկական պուրակում:

ԲԱՉՈՒՄ ԵՆ ԿՈՉՎԱԾՆԵՐԸ, ԲԱՅՅՍԱԿԱՎ ԵՆ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ



«Լուսարար»-ը Արցախից բռնատեղահանված և այժմ ԳՂ ուսումնական հաստատություններում աշխատող ուսուցիչների դիմանկարների շարք է սկսում:

Արցախի կրթական գործի ճանաչված կազմակերպիչներից մեկն ասել է, որ դպրոցում անգամ մեկ անվերապահ հեղինակավոր ուսուցիչը կոլեկտիվի համար լոկոմոտիվի դեր է կատարում՝ իր ետևից տանելով ամբողջ դպրոցը: Իսկ Արցախի յուրաքանչյուր դպրոցում աշխատում էր մասնագիտական, մանկավարժական, մարդկային բարձր ու վեհ արժեքներով օժտված ոչ մեկ ուսուցիչ-անհատ և նրանց աշխատանքի շնորհիվ է, որ այսօր ԳՂ կրթական հաստատություններում սովորող աշակերտների մասին միայն գովեստի խոսքեր ենք լսում: Նրանցից մեկն էլ այս դիմանկարի հերոսուհին է:

Գ 2

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՅՆ ԴԱՅՔԱՐՈՒՄ Ե ՇԱՆՈՒՆ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրինությունը 2023թ. սեպտեմբերին բռնի տեղահանությունից ի վեր անլուր ջանքեր է գործադրում դպրոցի գործունեությունը շարունակելու և այն պահպանելու ուղղությամբ: «Մենք՝ Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի վերաբացման նախաձեռնող խմբի անդամներս, փորձում ենք պահպանել մեր սիրելի կրթօջախը՝ հուսալով ու հավատալով, որ կկարողանանք բարի մարդկանց և իրավասու կազմակերպությունների օգնությամբ վերակազմակերպել դպրոցի աշխատանքը և շարունակել շուրջ ինը տասնամյակի պատմություն և բարի համբավ ունեցող կրթօջախի կենսագրությունը»,- այսպիսի հայտարարություն է տարածվել դպրոցի կողմից: Այդ նպատակին են ուղղված մինչև օրս դպրոցի կազ-



մակերպած համերգները Երևանում, որոնցից վերջինը՝ հինգերորդը, տեղի ունեցավ հունիսի 15-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում:

Գ 5

«ԱՐՑԱՆԸ ԿԱՐԴՈՒՄ Է» ԳՐՔԱՐՇԱՎԸ ՄԻԱԿՈՐՈՒՄ Ե ԱՐՑԱՆՑԻ ԸՆԹԵՐՑԱՍԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Աշակերտների մեջ գրքի նկատմամբ սեր արթնացնելու, դպրոցական պարտադիր գրականությունը անառային արձակուրդին նրանց կողմից ընթերցելու նպատակով 2020թ. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանի նախաձեռնությամբ ներդրվեց «Արցախը կարդում է» ծրագիրը: Դա իր բարերար ազդեցությունը թողեց երեխաների ընթերցասիրությունը խթանելու վրա, ինչը հաստատում էին նաև «Լուսարար»-ի կողմից գրադարաններ կատարած շրջայցի արդյունքները: Աշխատակիցները վկայում էին, որ անհամեմատ ավելացել է գրադարան այցելողների թիվը և այս կամ այն գրքի պահանջարկը:

Գ 2

ՄԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

ԲԱԶՈՒՄ ԵՆ ԿՈՉՎԱԾՆԵՐԸ, ԲԱՅՅ ՍԱԿԱՎ ԵՆ ԸՆԹՐՅԱԼՆԵՐԸ

1 Լիլիթ ԱԶԻԶՅԱՆ: Աշխատել է Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցում: Քիմիայի և կենսաբանության մասնագետ է, եղել է դպրոցի ուսուցչական մասի վարիչը: Այժմ աշխատում է Երևանի հ. 146 հիմնական դպրոցում: Դասավանդում է կենսաբանություն առարկան:

Վաղուհասի միջնակարգ Արցախի բարեկարգ, հմուտ մասնագետներով համարված դպրոցներից էր: Վաղուհասը արցախյան շատ գյուղերի պես 1990-ականների պատերազմի ժամանակ թշնամու կողմից անբողոքությամբ ավերվել, հրդեհվել, հողի էր հավասարվել: Ազատագրումից հետո (1992թ. սեպտեմբեր) գյուղի բնակչությունը, թեկուզ ապրելու աննպաստ պայմաններին, վերադարձել է, ամեն մեկն իր համար սկզբուն փայտե կացարան ստեղծել, այնուհետև պետության ու բարերարների աջակցությամբ իրենց օջախները և առաջին հերթին դպրոցը վերականգնել, անթաքույց մրցման մեջ մտած՝ բազմաճյուղ ընտանիքներ ստեղծել, շենացրել, բարգավաճ գյուղ դարձրել: Վաղուհասում պատերազմից հետո ավելի շատ երեխաներ, այն էլ տղաներ էին ծնվում, քան մինչև պատերազմը, և բնակչության թիվը պատերազմից մի քանի տարի անց նախապատերազմականից ավելի շատ էր:



Կենսաբանության մասնագետ Լիլիթ Ազիզյանն այս երևույթը պարզաբանել էր հետևյալ կերպ. բնությունը ինքնակարգավորող հատկություն ունի: Ի դեպ, արժե նշել, որ մեր հերոսուհին, ծնված, մեծացած լինելով քաղաքում (այդպես էին անվանում Ստեփանակերտը), 2006 թվականին հարս էր զնացել Արցախի համար հեռավոր համարվող Վաղուհաս գյուղ և դարձել այս դպրոցի, հետևաբար ն՝ գյուղի զարգացման լոկոմոտիվներից մեկը: Սովորաբար որպես լավ ուսուցչի փաստացի վկայություն նշվում են նրա այն շրջանավարտները, որոնք դարձել են նշանավոր մարդիկ՝ գիտնականներ, բժիշկներ, ռազմական գործիչներ և այլ մասնագետներ: Դա, հարկավ, այդպես է: Բայց պակաս կարևոր չէ և այն, որ նրանք կրթում, դաստիարակում են հայրենիքի արժանավոր քաղաքացիներ, որոնք պատիվ են համարում ապրել և արարել իրենց հայրենի հողում, շեն են պահում իրենց բնակավայրը: Նմանները չեն երկնչում ու չեն փախչում դժվարություններից, փորձում են իրենք լուծել խնդիրները: Լիլիթ Ազիզյանի սաները հենց այդպիսի մարդիկ են՝ և լավ մասնագետներ, և լավ քաղաքացիներ, և որ առավել դժվար է՝ լավ մարդիկ, ինչպես կասեր Մեծն Թումանյանը. «...հեշտ բան հո չի՞ մարդ լինելը...»:

Վաղուհասի դպրոցը Արցախում կենսաբանության հանրապետական օլիմպիադային ամենից շատ մասնակիցներ տվող կրթօջախն էր: Նրանց գերակշիռ մասը բժշկական համալսարանի պոստեմցիալ դիմորդներ էին: Երևանի Դերասու անվան բժշկական համալսարանի ընդունող հանձնաժողովը ընդունվածների փաստաթղթերում կարդալով «Վաղուհաս» տեղանունը, ասում էին՝ հա՛, սա այն բժիշկներ արտադրող գյուղն է:

«Լուսարար»-ը Արցախի Դանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեսչական խմբի կազմում գործողված լինելով Վաղուհասի դպրոց, ակնհայտ է եղել, թե ինչքան են Լիլիթ Ազիզյանին սիրում աշակերտները: Նա միշտ շրջապատված էր աշակերտներով: Տնից դպրոց և դպրոցից տուն ճանապարհին նրան միշտ ուղեկցում էին երեխաները: Դասամիջոցներին էլ նրանք «հանգիստ» չէին տալիս. նրանց համար ամենահաճելի պահերը սիրելի ուսուցչուհու հետ անցկացնելն էր: Պարզ է, երբ սիրում են ուսուցչին, սիրում են նաև նրա դասավանդած առարկան: Այս դպրոցի աշակերտները կրկնուսույցների մոտ չէին պարապում, քանի որ դրա կարիքը չէր լինում: Լիլիթ Ազիզյանին հետևելով ուսուցիչներն արտաժամյա պարապում էին աշակերտների հետ: Դպրոցը քիմիայի և կենսաբանության լավ կարիներուներ ուներ: Երբ թեմայի վերաբերյալ որևէ պատահ էր անհրաժեշտ լինում, աշակերտներն իրենք էին ցանկություն հայտնում պատրաստել, նմանապես՝ որոշ գործիքներ:

Թե բժշկական համալսարանին քանի սան է տվել Լիլիթ Ազիզյանը, արդեն հաշիվը կորցրել է: 2021-ին «Լուսարար» թերթին տված հարցազրույցի ժամանակ, երբ պատմում էր նրանց հաջողությունների մասին, հպարտությամբ նշել է, որ Դերասու անվան բժշկական համալսարանում սովորող իր սաները՝ տղա-աղջիկ, 2020թ. կամավոր մեկնել են պատերազմի դաշտ՝ վիրավոր մարտիկներին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Երևանում 11-րդ դասարանում սովորող ավագ որդին արդեն վերջնականապես կողմնորոշվել է, որ ընտրելու է բժշկի մասնագիտությունը: Բազում շրջանավարտների համար բժշկի մասնագիտության դուռը բացած մայրը չի ազդել որդու որոշման վրա, ընդհակառակը, բացատրել է, որ դա շատ դժվար, անչափ պատասխանատու գործ է: Որպեսզի տղան ճիշտ կողմնորոշվի, Ազիզյանի բժիշկ սաները նրան իրենց մոտ պրակտիկայի են տարել: Եվ միայն դրանից հետո էր որդին ասել՝ այո՛ իրեն այդ ուղիով եմ տեսնում:

Լավ ուսուցիչն ուղեկցում է սանին նրա ողջ կյանքի ընթացքում: Իր՝ Լիլիթ Ազիզյանի հուշերում էլ անմոռաց են ԱրԳՎ վարժարանում իր սովորած տարիները: Նա անթաքույց հպարտությամբ նշում է, որ իր կյանքը կանխորոշել, մանկավարժի իր ճանապարհը գծել է քիմիայի մասնագետ Արինա



Գրիգորյանը: «Երևի դրանից է, որ ես չեմ կարողանում աշակերտների հետ այլ կերպ հարաբերության մեջ լինել», - ասում է նա: Ու շարունակում է թվարկել իր՝ որպես մասնագետի կայացման գործում այլ մանկավարժների անուններ. «Ես այդ լավը տեսել եմ իմ ուսուցիչներից, ես էլ պետք է իմ աշակերտների համար նույնը լինեմ...»: Եվ անշահախնդրորեն իր գիտելիքները փոխանցում է նրանց:



Այսօր, երբ Արցախից բռնի տեղահանվելուց հետո նրա աշակերտները, որոնցից հինգը բժշկական համալսարանի հավակնորդներ էին, հայտնվել են տարբեր բնակավայրերում, շարունակում են առցանց եղանակով գիտելիքներ ստանալ իրենց ուսուցչուհի Լիլիթ Ազիզյանից: Նպատակադրվել են ուսուցման անվճար համակարգ ընդունվել:



Լիլիթ Ազիզյանն այդպես աշխատել է Արցախում և այժմ շարունակում է Երևանում: Դ. 146 դպրոցի կողմից ստեղծված միայն դրական է արտահայտվում: Արցախից իր հայրենի գյուղը հեռավորում է սերմանվում է հանրության մեջ, Լիլիթ Ազիզյանն ասում է, որ ինքը բարեբախտաբար չի տեսնում իր դասավանդած դպրոցում ոչ ուսուցիչների, ոչ աշակերտների մոտ: Մանկավարժական կոլեկտիվը՝ տնօրեն Մարիետա Դավթյանի ղեկավարությամբ, սիրով է վերաբերվում և արցախցի ուսուցչին, և դպրոցում սովորող արցախցի երեխաներին: Լիլիթ Ազիզյանի կրտսեր որդին ավարտել է նույն դպրոցի 3-րդ դասարանը, որտեղ արցախցի երեխաներ կան: Ասում է՝ այնպես են արել, որ դասարանի երեխաները Արցախի բարբառով էլ են խոսում:

Լավ ուսուցիչն ճրագով են ման գալիս ամենուրեք: Լիլիթ Ազիզյանը փնտրված մասնագետ է նաև Երևանում: Նա տարբեր տեղերից աշխատանքի առաջարկություն է ստացել՝ ավելի բարձր վարձատրվող, ինչպես, օրինակ՝ քիմիկ-լաբորանտ, տեխնոլոգ արտադրությունում, բայց ասում է. «Ես ինձ այլ ուղիներում չեմ տեսնում: Մեր վիճակում, ճիշտ է, զուտարը մեծ նշանակություն ունի, բայց մեկ է, դա ինձ չի գայթակղում, իմը աշակերտն է, մանկավարժությունը, դպրոցը, ես միշտ պիտի շփման մեջ լինեմ աշակերտի հետ»:

Իրավ է ասված՝ բազում են կոչվածները, բայց սակավ են ընտրյալները:

Սվետլանա ԽԱԶՏՐՅԱՆ

«ԱՐՑԱՒԸ ԿԱՐԴՈՒՄ Է» ԳՐՔԱՐԶԱՎԸ ՄԻԱԿՈՐՈՒՄ Ե ԱՐՑԱՒՍԻ ԸՆԹԵՐՑԱՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

1 Գրքարշավը կանգ չառավ նաև Արցախի շրջափակման ժամանակ:

2023թ. սեպտեմբերի 19-ի առավոտյան «Լուսարար»-ը այցելեց ԿԳՄՍ նախարարություն՝ գրքարշավի արդյունքներին ծանոթանալու: Նախարարության արտադպրոցական ծրագրերի ղեկավար մասնագետ, գրքարշավի աշխատանքները համակարգող Նաիրա Դահրամանյանն ասաց, որ շրջափակմանը պայմանավորված՝ չէին ուզում այդ տարի շարունակել ծրագիրը, քանի որ ճանապարհը փակ լինելու պատճառով չէին կարող Երևանից գրքեր բերել (մրցանակները տրվում էին գրքի տեսքով), տրանսպորտի բացակայության պատճառով տեղեր այցելել և այլն: Սակայն ճարտարի միջնակարգ հոսքային դպրոցի տնօրեն Ջավադ Դակոբյանը զանգեց էր նախարարություն, որ իրենց և ենթաշրջանի մյուս դպրոցների երեխաները պատրաստ են գրքարշավին, ինչն էլ հայտարարություն չկա այդ մասին: Նշեմք, որ այդ դպրոցները գտնվում են ծննդով ճարտարցի, ռուսաստանաբնակ գործարար Աշոտ Ջիվանյանի հիմնադրած «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության հովանավորության տակ, որը ցանկություն էր հայտնել ներդրում ունենալ նաև գրքարշավում:

Այ ԿԳՄՍ այդ ժամանակվա նախարար Նորայր Սկրտչյանը իրահանգել էր շարունակել գրքարշավը՝ մրցանակների համար սահմանափակվելով նախարարության պահեստում եղած գրքերով, որոնք հիմնականում ռուս դասական գրողների երկերն էին: Գրքարշավին մասնակցել է շուրջ 220 աշակերտ, որից 46-ը լավագույն էր: Ծրագիրը միշտ մեկնարկում է հուլիսի սկզբին: Նախարարությունը ներկայացնում է պարտադիր գրականության ցանկը, որպեսզի երեխաները ամառային արձակուրդի ժամանակ ընթերցեն: 1-4-րդ դասարանների աշակերտներն իրենց կարդացած գրքերը ներկայացրել էին նկարի տեսքով, 5-9-րդիները՝ բանավոր, իսկ ավագ դպրոցի աշակերտները վերլուծել էին: Նախարարությունում տեսանք մրցանակի արժանացած ընթերցասերներին հասցեագրված պարգևները, առանձին փաթեթով դասավորված էին ևս երկու մանկավարժի մրցանակները: Դրանց հասցեատերերն էին Մարտակերտի Վ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի ուսուցչուհի Գոհար Մամունցը, որի հորդոր-պահանջով դասարանի բոլոր աշակերտները մասնակցել էին գրքարշավին և ճարտարի միջնակարգ հոսքային դպրոցի տնօրեն Ջավադ Դակոբյանը, որը համակարգել է ճարտարի 4 և Քերթի, Խնուշիակի դպրոցների գրքարշավը: Արցախեցիները շրջաններ առաքել հնարավոր չէր վառելիքի բացակայության պահանջով: Սպասում էին պատեհ առիթի՝ դրանք տեղ հասցնելու համար:

Դրանք այդպես էլ մնացին նախարարությունում, ինչպես նաև՝ «Լուսարար»-ում հրապարակվելիքը՝ ձայնագրիչում, քանի որ սեպտեմբերի 19-ի կեսօրին Ստեփանակերտում սկսվեցին ռմբակոծությունները: Այս նախաբանը մի նպատակ էր հետապնդում՝ ցույց տալ, որ «Արցախը կարդում է» ծրագիրը չի ընդհատվել անգամ շրջափակման պայմաններում և թեկուզ ուշացումով տեղեկություններ հաղորդել 2023-ի գրքարշավի արդյունքների մասին:

Ուրախությամբ տեղեկացանք, որ «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերությունը հնարավորություն ընձեռեց 2024թ. գրքարշավը շարունակել Արցախից բռնատեղահանված աշակերտության շրջանում, և ստանձնել է խրախուսել ոչ թե առանձին դպրոցների, այլ ողջ ծրագրի իրականացման առաքելությունը, ավելին՝ այն կրելու է շարունակական բնույթ: Պարզևստիման գրավիչ ֆոնդը, կարծում ենք, խթանող գործոն կլինի մեծ թվով մասնակիցներ ունենալու համար: Բայց առավել գնահատելի են արժեքավոր երևույթի բարոյական կողմն է:

«Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության ամբողջական առաքելության մասին խոսելը մի առանձին թեմա է, թե Արցախում և այժմ նաև ԴՀ-ում ինչպիսի ծրագրեր է իրականացնում ճարտարցի և շրջակա գյուղերի իր հայրենակիցներին միասնականությունն ապահովելու գործում: Բայց որ գրքարշավի ծրագրի հովանավորումը կնպաստի որոշակի պատկերացում կազմել տարբեր վայրերում, այդ թվում՝ ԴՀ-ից դուրս սփռված արցախցի երեխաների մասին և որոշակիորեն ուղղորդելու նրանց որպես արցախցի դաստիարակելու և կորսված հայրենիքի վերադարձի հույսը ամմեռ պահելու համար, աներկբա և աստվածահաճ գործ է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ-155

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ - ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կինը աշխարհի չէ եկած միակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիքական յատկությունները զարգացնելու համար: Զապել Եսայան

Իր ժամանակի գրաքննադատների կողմից ֆեմինիստ անվանված հայ նշանավոր գրող, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, գրականագետ Զապել Եսայանը իրականում մտահոգված է եղել սոցիալական անարդարությամբ, այդ թվում՝ գործադրված նաև կանանց նկատմամբ:

Զապել Եսայանը ամերիկյան Refinery 29 կայքի վարկածով ճանաչվել է աշխարհի ամենամանավախ կանանցից մեկը: «Եսայանը կատարյալ օրինակ է կնոջ, որն ապրել է այն ժամանակներում, երբ շատ վտանգավոր էր ցուցադրել սեփական խելքը և ուժը»,- գրել է պարբերականը:

«Մեծերի հետ առնչվելը ավելի է մեծացնում ու գործացնում մեր հոգիները... Զապել Եսայան մեծությունը ոչ մի բնագավառում երբեք միջակ չեղավ: Հոգով ու մտքով բազմ այդ կինը համարձակորեն բռնեց արդարության տուտը ու տարավ իր հետ առանց վարանելու»,- այս խոսքերով է հերթական միջոցառման սկիզբն ազգային-ամերիկյան թատերախմբի ղեկավար Թումանյանի թանգարանի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղարախանյանը:

Այս օջախը դարձել է մեծերի հետ շփման ջերմ մի միջավայր, որտեղ մարդ մոռանում է առօրյա հոգսերը (մանավանդ մեծեր՝ արցախցիները) ու ապրում է մեծերի կողքին մեծերի նման:

Հերթական միջոցառումը նվիրված էր երկու հայ մեծությունների՝ Հովհ. Թումանյանի և աշխարհին հայտնի խիզախ կնոջ մարմնացում Զապել Եսայանի առնչություններին ու նամակագրական կապերին: Չնայած այդ նամակները շատ չեն, այնուամենայնիվ, նրանց միավորում է այն հանգամանքը, որ այդ երկու մեծությունների կյանքի գիտակցական շրջանի զգալի մասը նվիրված է եղել մեր ժողովրդի դառը ճակատագրի ու ազգային տառապանքների՝ աշխարհին հաղորդակից դարձնելու բարդ ու դժվարին առաքելությանը: Երկուսն էլ իրենց հոգում կրել են այդ դառը ճակատագիրն ու տառապանքները և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես, բայց մնացել են միշտ իրենց անհաս բարձունքին՝ հպարտորեն տանելով բոլոր դժվարությունները:

Զ.Եսայանի և Հովհ. Թումանյանի կյանքի հերոսական ու ողբերգական էջերը լուսաբանելու պատիվը տրված էր ԵՊՀ-ի ասպիրանտ Անի Օհանյանին, որը հանգամանորեն ներկայացրեց, թե ինչ անլուր տառապանքների միջով են անցել երկու գրողները՝ ազգանպաստ իրենց գործունեությունը ծավալելու ճանապարհին:

Երբեմն-երբեմն Անիի հաճելի խոսքն ընդհատվում էր թանգարանի կամարների տակ թևածող արևմտահայերենի քաղցրահունչ ելևէջներով, որը ներկայացնում էր Թումանյանի թանգարանի աշխատակցուհի, Հովհակից գաղթած Մայայն Պոչկեզեյանին: Հինգերորդ Զ.Եսայանի՝ 17 տարեկանում գրած առաջին բանաստեղծությունը՝ «Երգ առ գիշեր»-ը, և հատվածներ «Հոգիս աքտորյալ» վիպակից:

Եկուր, ով գիշեր. եկուր քու սև քղանցքներովդ աշխարհը ծածկել:

Քու գովությանդ մեջ մարտ՝ վերջալույսին յետին շունչը, Ծածկել աշխարհը քու դամբանական մութիդ մեջ:

Իր ողջ հմայքով արևմտահայերենը ծորում էր Մայայնի շուրթերից ու խորը թափանցում մեր հոգիները:

Իր ապրած ժամանակի դաժան իրականությունը ավետաբեր էր նետում խիզախ ու համարձակ Զապել Եսայանին. ամեն կերպ փորձում էր աստար լինել տառապյալ հայ ժողովրդին:

Նա միակ կինն էր, որ 1915թ. հայտնվում է թուրքերի «սև ցուցակում»: «Պոլսի հյուրանոց ժամանած թուրքերին, որոնք եկել էին իր ետևից, և ինքն էլ նոր էր դուրս եկել իր համարից, նրանց հարցին, թե՞ Զապել Եսայանը դու՞ ես:

-Չէ, Զապելը ներսում է,- հանգիստ պատասխանել է նա ու անշտապ հեռացել:

Թուրքի ու հետո նաև հույնի անվան տակ թաքնվելով՝ նա հայտնվում է Թիֆլիսում՝ Թու-

մանյանի տանը (սա նրանց առաջին հանդիպումն էր), որը ջերմորեն է հյուրընկալում Զապելին:

Այստեղ նա ամեն կերպ օգնում էր հայ փախստականներին ու գրի առնում նրանց վկայությունները Ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած վայրագությունների մասին: Փարիզում բազմաթիվ պարբերականներում տարբեր լեզուներով հրատարակել է բազմաթիվ աշխատանքներ Հայոց ցեղասպանության մասին: Երկար տարիներ եղել է ՀՕԿ-ի փարիզյան մասնաճյուղի անդամ, զբաղվել է հայ գաղթականներին և որբերին աջակցելու հարցերով:

Փարիզյան մտավորականության շրջանում ճանաչված լինելու և ֆրանսերենին կատարելապես տիրապետելու շնորհիվ 1919-1920թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել Փարիզի խաղաղության խորհրդակցության՝ որպես ՀՀ պատվիրակության խորհրդակցական ու թարգմանիչ:

Զապելի ուսերին է ծանրացած եղել Ցեղասպանության վավերագրության, որբերի խնամքի, Եվրոպայում հայ գրականության տարածման ու հանրահռչակման գործը: Փարիզում հավաքել



ու տղամարդու կեղծամական տակ հրապարակել է Ցեղասպանությունից փրկվածների պատմությունները՝ շարունակելով սարսափելի իրադարձությունների վավերագրման իր առաքելությունը:

1916թ. «Հայկական վերջին հալածանքները Կ.Պոլսում» վերնագրով Թիֆլիսի ժողովարանի դահլիճում դասախոսություն է կարդացել Զ.Եսայանը, որը նախագահում էր Հովհ. Թումանյանը: Որոշակի գույնար է հավաքվել գրական գործիչների համար (շատ չնչին), որը հավասարապես բաշխվել է նրանց միջև: Իսկ երբ գրեց «Վերջին բաժակը» ստեղծագործությունը, Թումանյանը բարձր գնահատականի արժանացրեց: Կենսախիղճ Թումանյանը երբեմն օրերով խորը թախծում էր, ժպիտը՝ չքանում դեմքից: Այս ամենը հայտնի էր Զապելին:

Երբ Թումանյանը Մետեխի բանտում էր, նամակներից մեկում գրում է. «Եսպես է եղել աշխարհի բանը՝ լավությունն էլ է պատժվում, են էլ ավելի շատ...»: Իսկ 1915թ. հուլիսի 23-ին, երբ հիվանդ ու հյուծված նստած էր Թիֆլիսի իր ամառանոցում, և վրա է հասնում Վանը թշնամուն հանձնվելու բոթը, ծովածավալ գաղթականությունն էլ բռնել էր Իրիդի և Էջմիածնի ճանապարհը, Թումանյանը գրում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը. ո՞վ կարող էր 1915թ. ասել՝ իմ նոր հայրենիք, հզոր հայրենիք: Այդ տարիներին բոլորի շուրթերից միայն անձեղ էր հնչում, իսկ Թումանյանն ասում էր.

Ու պոետներ, որ չեն պոծել իրենց շուրթերն անձեղով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:

Հուլիսի 30-ին նա իր դստեր՝ Նվարդի հետ Էջմիածնում էր: Նրա հաստատուն ջանքերի շնորհիվ բացվում է 5 հիվանդանոց՝ 500 մահճակալով, որբանոց՝ 3000 երեխայի համար: Այդ փոքրիկ, բախտահալած որբերի պաշտպանն ու զուրգուրդն է եղել, որի համար նրանց կողմից անվանվել է «մեծ բանաստեղծ հայրիկ»:

Լեռն գրել է. «Հովհ. Թումանյանն այդ դժոխքի մեջ է գործում, բարեխառնաբար չի զժվում»:

Զապել Եսայանին գրած նամակում ասվում է, որ չի զժվում, բայց ահա թե ինչ օրն է ընկնում.

«...մի ծանր թախիծ ճնշում է սիրտս շարունակ: Շատ բան է խորտակվել ինձ համար աշխարհում, և աշխարհքը շատ ցավերով է լցված արդեն: Շատ բան կա, որ էլ չեմ սիրում, բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ՝ էն օրվանից հետո, որ տեսա մորս՝ սպանված եղբորս դիակի վրա, և մյուս սպանված եղբորս էլ թաքցրեցինք, որ նա չիմանա, այլևս չեմ կարողանում տեսնել նրան - իմ մորը»:

Թումանյանն ապրեց ոչ այնպես, ինչպես կուզենար, այլ այնպես, ինչպես թելադրում էր իր ժողովրդի ճակատագիրը, ամուն ամեն ինչ, որ կարող էր՝ առանց իր կարողությունների սահմանն իմանալու:

Զ. Եսայանի երկրորդ նամակը՝ ուղղված Թումանյանին, թվագրված է՝ 1921թ. Պոլիս, երբ գործը ՀՕՍ-ի նախագահն էր: Հովսեփ Միրզոյանին հղած նամակում Թումանյանը Զ. Եսայանի մասին գրում է, որ նա (Զ. Եսայանը) շատ է մտահոգված հայ գաղթականների ճակատագրով:

Շատ հոգատար էր Ամենայն հայոց բանաստեղծը Զապելի հանդեպ մանավանդ այն ժամանակ, երբ իմանում է, որ նա թոքերի հիվանդություն ունի: Թումանյանը Բորժոմիում բուժվելու համար նրա համար համար է վարձում, չնայած Զապելը նախընտրում է ուրիշ վայր մեկնել:

Մի այլ նամակում (1921թ.) Թումանյանը Զ. Եսայանին գրում է. «Մեծ ցավով կարդացի Ձեր նամակը: Շատ ու շատ եմ փափագում տեսնելու Ձեզ լավ օրերի և լավ պայմանների մեջ, որին էնքան արժանի եք դուք: Երանի թե շուտով կարգի գան մեր դժբախտ երկրի գործերը, և, կարծում եմ, Ձեզ համար էլ միայն մեր երկրում պիտի ապահով անկյուն գտնվի: Ցավում եմ, որ չեմ կարող այժմ կես ասել թե եկեք: Տակավին խառնակ դրություն է: Բայց դուք լսած եք, անշուշտ, թե ինչքան վերաբերմունք ունեն այժմյան կառավարությունները թե մեր, թե հարևան երկրներում դեպի գրականությունը»:

Ի վերջո Զ. Եսայանը հայրենիքում էր, սակայն խորհրդային կարգերը չէին կարող մարտնչել նրա ընդձեռնված հայրենասիրությունը: Դրա համար էլ Գրողների միությունում ունեցած իր ելույթին հաջորդում է դաժան թակոցը...

Թուրքական հետապնդումներից փրկված Զապելը շատերի պես 1936-ին հայտնվում է «սովետական մասաղացում»:

Նրան մեղադրում էին «Ֆրանսիական հետախուզության գործակալ լինելու» մեջ: Կայացվում է դատավճիռը՝ գնդակահարություն...

Նա խնդրագիր է ուղարկում Մոսկվա, որի արդյունքում «մեղմվում է» պատիժը, և դատապարտվում է 10 տարվա ազատազրկման:

«Զապել Եսայանը երբեք չէր հուսահատվում և ասում էր, որ ինչ էլ լինի՝ ճշմարտությունը հաղթանակելու է, իսկապես պարզելու են իր գործի հանգամանքները և հանելու են իր վրայից այդպես անարժան կերպով իրեն վերագրված մեղադրանքը: Նա ասում էր, որ ամառադար մեղադրանքը կրկի ու դեռ օգտակար կլինի Սովետական Հայաստանի համար»,- իրենց բանտային գրույցներն է վերհիշում Կարինե Գյուլիքեթյանը:

Զապելի դուստրը՝ Սոֆի Եսայանը, հուշագրության մեջ նշում է, որ 8 ամիս անց տեսակցում է մորը: «Մորս պետք է տեսնեի սեպտեմբերի 2-ին 1939թ.: Քաղաքային բանտումն էր. սև սաթին խալաթը հագին, մազերը արտակարգ սպիտակացած, բայց անկաշկանդ հոգեպես, նույնիսկ անքոր: Շոյեք 2 տարեկան երեխայիս, իրեն ասեց. «Պիտե՛ր կրնես, կասես տատիկա հա-կա հեղա-փո-խա-կան...» ու ինքն իրեն հա-կաճառելով ասեց. «Բայց չէ, 20 տարի հետո չես ասի...»: Եղբորս հարցին, դատ տեղի ունեցավ թե ոչ, մայրս պատասխանեց «հա, և առաջին որոշումը մի քիչ շատ էր, երկրորդը՝ ոչինչ»: Այդ «ոչինչը» Մոսկվայից «մեղմված» նոր վճիռն էր՝ 10 տարվա ազատազրկումն էր...»:

Արխիվներում առկա Զապելի վերջին նամակները թվագրված են 1943թ.՝ Բաքվից, թեև նրա

որդին՝ Հրանտը, նշում է, որ մորից վերջին նամակը 1945թ. ապրիլին է ստացել:

Զապել Եսայանի մահվան ճշգրիտ հանգամանքները, ժամանակն ու վայրը մինչ օրս անհայտ են:

Ուշացած արդարությունը վերականգնվում է միայն 1956 թվականին. ոչ միայն Գյուլիքեթյանին, այլև Ստ. Զորյանին, Գեղամ Սարյանին և Վահրամ Ավագանի վկայություններով՝ Զապել Եսայանը ներկայացված է բացառապես դրական, հայրենասիրական, ազնիվ լույսի ներքո. նրա ոչ մի հրապարակումներում ու գրույցներում որևէ հակասովետական միտում չի եղել:

1957թ. նա արդարացվում է, և հանվում է մեղադրանքը: Պատասխանատվության են ենթարկվում 1939թ. հունվարի 23-ին նրա դեմ ներկայացրած դատավճիռի հեղինակները:

Վերջապես, Արդարության հույսը լուցկու տուփին ի պահ տված այս խիզախ հայուհին (բանտում գտնված ժամանակ նա ասեղով իր արյունով էր լուցկու տուփի վրա գրառումներ կատարել, քանի որ տևական ժամանակ գրկված էր եղել իր հիմնական գեները՝ թուղթ ու գրչից, և իր փախուստը բանտախցի խոնավ ու գորշ պատերից գտնում էր կալանավորների համար անցկացվող ֆրանսիական գրականության դասախոսությունների մեջ) վերադարձվում է հայ ժողովրդին՝ իր անաղարտ ու անբասիր նկարագրով:

Արդարությանն ու իր երազանքին շատ անուր կերպով հավատացող Եսայանին, իրոք, չեն ներվել իր հենց այդ որակները՝ անարդարության դեմ բարձրաձայն խոսելը, անարժանի քննադատելը, արժանիին գովելը՝ ի հեճուկս քաղաքական հակառակ տրամադրությունների:

«Հոգիս աքտորյալ» վիպակում գրողը վարպետորեն ներկայացրել է քաղաքական բարդ իրավիճակում իրենց գործունեությունը ծավալող մտավորականների հավաքական կերպարը. մտավորականներ, որոնք խճճվել են քաղաքականությանը շնչող մթնոլորտում, և գրողը նախանշել է հոգեկան ազատության ու կաշկանդող պատյանները կտրելու ուղին: Չնայած վիպակը ինքնակենսագրական է, այնուամենայնիվ, այն շնչում է խոր փիլիսոփայությամբ:

Չենց այս հանգամանքով պայմանավորված՝ միջոցառման ավարտին Լուսինե Ղարախանյանը հավելեց, որ խոսված մեջ գտնվող կինը, այնուամենայնիվ, ողջ տիեզերքը գրկելու կարողություն ու ձգտում ունի. սրանով է պայմանավորված Զապել Եսայանի անառարկելի մեծությունը: Այնուհետև շնորհակալություն հայտնեց նախածեռնողներին ու մասնակիցներին և ԵՊՀ-ի ասպիրանտ Անի Օհանյանին նվիրեց Հովհ. Թումանյանի գիրքը՝ արժանվույսն գնահատելով նրա վաստակը:

Վերջում թանգարանի աշխատակցուհի Մայտա Պոչկեզեյանը ներկայություն հյուրասիրեց իր իսկ ձեռքով պատրաստած վարդի մուրաբան, որի մասին այնքան տպավորիչ նկարագրել է Զապելը իր ստեղծագործության մեջ: Կարդի մուրաբայի պատրաստումը հաստուկ ավանդույթ է եղել Զ. Եսայանի ընտանիքում, որի գլխավոր դերակատարը տատն էր: Այդ ավանդույթին հավատարիմ մնալով՝ Մայտան էլ նույն կերպ վարվեց՝ դրանով ավելի ևս ամուլցնելով օրվա միջոցառումը:

Մեծերն իսկապես անսպառ են. ինչքան շատ են խորանում նրանց գործունեության մեջ, այնքան չպեղծված էջեր ու նոր շերտեր են բացահայտում:

Շատ ուրախ ենք մանկավարժներս, որ այսօր դպրոցական ծրագրում հաճելիորեն տեղ է զբաղեցնում Զ.Եսայանը՝ իր հանճարեղ «Միլիտարի պարտեզները» ստեղծագործությամբ: Թերևս սա շատ վաղուց պիտի լիներ:

Մեր երախտագիտությունը հայտնեց Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղարախանյանին՝ գեղեցիկ ու բովանդակալից նախածեռնությունների համար. այս էլ որբերող անգամ այդ լույսի տաճարում հաղորդակից ենք դառնում հայոց մեծերի՝ հավատ ու լույս ընծայող կյանքի էջերին՝ դրանցով ևս ավելացնելով մեր հոգու լույսը:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՎՆԿԱՅՏԸ՝ ԱՆԿԱՎԱՏԱԼԻ

ԵՐԲ ԱՇԽԱՐՀԻՑ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ԱՐՑԱԽԸ ԿՈՒԼ ԵՐ ԳՆՈՒՄ



1

Արցախից բռնատեղահանվելուց հետո հասկացա, որ հայրենիքում մնաց իմ ուսուցչությունը: Այն մանկավարժի պատվաբեր գործունեություն էր Մարտակերտի վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում, այն ճանապարհ էր, որ տարիներով անցա մի մանկավարժական և բազմաթիվ աշակերտական կոլեկտիվներում, որտեղ մեծ հարգանք ու սեր կար Ուսուցչի համոզմամբ: Այն պատվաբեր ճանապարհ էր, որով անցնողը հպարտություն է զգում, որ իրեն բախտ է վիճակվել անուն ու հեղինակություն թողնել իր հետևում:

Այդ ճանապարհը կարոտաբեր է դառնում, երբ կորցնում ես հայրենիք, տունուտեղ, ընկնում նոր աշխատանք գտնելու փնտրտուքի մեջ և հասկանում, որ երանություն էր Արցախի ուսուցչուհի լինելը, անգամ, երբ վերջին երկու տարում թռչակառու մանկավարժ է՝ դպրոցում ժամանակավոր աշխատելիս:

.....

Հնարավոր չէր Արցախը մեզ հետ բերել, բայց մեր հիշողության մեջ ամուր և ստանալով դարեդար, սերնդեսերունդ կտանենք, որտեղ էլ լինենք:

Հայրենիքը կորցնելուց առաջ ինն ամսից ավելի մեզ սովահարության տարան, պարտադրեցին, որ ապրենք ցրտահարված, առանց լույսի, բազում աղետների մեջ: Եվ զարմացան, որ հնարամիտ հայն ապրել գիտի, գոյատևել գիտի, որքան էլ օղակը սեղմեն: Ու սեղմեցին, որքան կարող են, սեղմեցին նոր գոհերի գնով, սեղմեցին հայրենիքը մեզանից դատարկելով, սեղմեցին մինչև հասան մեր ոսկորներին, ու երբ հասավ ջարդելու, մեզ բզկտելու, վերջացնելու պահը, քիչ դադար տվին, որ հեռանանք այն հողից, որում ծնվել, ստեղծել, արարել ենք...

Կտրված, ջարդված ու բզկտված հասանք մայր երկիր՝ մեր ներսում ահռելի ավերածություն՝ նոր գոհերի, հայրենիքի կորստով, բայց համոզված, որ պիտի ամեն ինչ, ամեն ժամ, ամեն վայրկյան մեր գրկում ամուր սեղմած պահենք Արցախը, որ գերու-

թյան մեջ չմտնի, իր զավակներից զրկված մեր սրբավայրն ամուր պահենք մեր սրտերում, որ մենության մեջ աղեկտուր չհեծեծա...

Ամեն անգամ հաց համտեսելիս նորից մտովի հայտնվում են Արցախում՝ արևածագի հացի հերթերում: Որքա՞ն առատ է հացը աշխարհում, իսկ մենք սոված, երբեմն կիսասոված էինք: Որքա՞ն առատ է աշխարհում լույսը, իսկ մենք ամեն օր ժամերով առանց լույս էինք: Նույնքան առատ է այստեղ գազամատակարարումը, իսկ մենք զրկված էինք ջեռուցումից, կաթվածահար էր ավտոճանապարհների երթևեկությունը, իսկ աշխարհում վառելիք կա, որքան ասես: Ցավոք, վառելիքն էլ դարձավ Արցախում նոր գոհերի պատճառ:

Մեր արմատներին, ազգային արժեքներին կառչած, դարերով հայկականը պահպանելով, հավատարիմ մեր նախնիների թողած ժառանգությանը՝ ապրում էինք մեր հավատքով, մեր ավանդույթներով, իսկ աշխարհին լեզու թե հավատ չէր հետաքրքրում, երբ անբարոն հաղթել էր բարոյականին, հին ու ազնիվ արժեքները տեղի էին տվել՝ իրենց տեղը զիջելով անպատվաբերությանը, երկսեռ կյանքը բախվում էր եռասեռ ու միասեռ անբարոյականությանը:

Այս նոր աշխարհը մերը չէր, երբ դեմառդեմ բախման էին ելել ազնիվ ու անազնիվը, մարդկայինն ու անմարդկայինը, բարոյականն ու անբարոյականը... Ու դարերից եկած մի կտոր երկիր իր մաքուր տեսակն էր ի ցույց դրել չարաղետ աշխարհին, իսկ աշխարհը, առանց այք թարթելու, նայեց, թե ինչպես են վերացնում այս ժողովրդին պատերազմներով թե սովահարությամբ, ցրտահարությամբ թե մեր գլխին բերած բազում աղետներով:

Արցախցիների դիմադրությունը կտրելու վերջին տարբերակը մեզ ոչնչացնելն էր, հայրենիքից զրկելը, հայրենի հողից քշելը... Ու բազում գոհերով հայրենագուրկ դարձանք, բայց չմոռացանք, որ ինչպես էլ լինի, ուղղակի ապրել է պետք, Արցախի մասին հիշողությունը թարմ պահել է պետք, իսկական արցախցու հայկական գենը սերնդեսերունդ փոխանցել է պետք...

2

24-ժամյա պատերազմ: Մարտակերտում դպրոցի ապաստարանից մեր բազմաբնակարան շենքի նկուղ տեղափոխվեցինք:

Կապերն անջատված են, չեն կարողանում մինչև երկինք հասնող իմ բարձրակազ խոսքերը շարել, բայց ձեռքի պայուսակիս մեջ գտնում են անդորրագրեր, որ պետական տուրք են մուծել լույսի, ջրի, հեռախոսի համար: Ու ալե-

կոծված հոգիս հանդարտեցնելու համար լապտերի աղոտ լույսի տակ այդ թղթերին են հանձնում վրդովմունքս, որ փոքր-ինչ թեթևացնեն զայրույթս, երբ ներսումս կուտակված հրաբուխը ուր որ է՝ պիտի ժայթքի:

Ժամեր տևող հրթիռակոծության տարափի տակ արտասովոր մայրեր, կծկված կանայք՝ երեխաներին զրկած... Անորոշություն, թե ինչ է լինելու մեզ հետ... Նկուղի ցեմենտե հատակի այս կամ այն անկյունում փոքրիկ երեխաներ, որոնց մայրերը հոգ են տանում քնեցնելու կամ նրանց սովածությունը հաղթահարելու... Իրար խառնված բնակիչներ, որ փորձում են տուն մտնել, գոնե փաստաթղթեր վերցնել, անհրաժեշտ իրեր:

Մեքենան, որով դուրս եկանք, վարում էր դպրոցական թռնիկ: Աչքիս նա ընկնում էր առջև, ժամերով մեծացավ, երբ հայրը դիրքերում էր: Շտապ հոր մեքենայի դեկը ձեռքն առավ... Ընտանիքով էինք, խնամի բարեկամներով: Հարագատ մարդիկ, որոնց ուղեկցությամբ ու առաջարկ-խորհուրդներով նա մեքենայով հետևեց մեծերին, և շուտով Մարտակերտից դուրս եկանք: Բայց դեպի ո՞ր, մենք էլ չգիտեինք: Սկզբում շրջանի գյուղերից մեկը նկատի ունեցանք, բայց շուտով փոխվեց ուղին դեպի Ստեփանակերտ:

Տանկը, որ կրակահերթ էր բացել, կողքով անցանք: Կրակում էր տանկիստ զինվորը անտառ մտած թշնամիների ուղղությամբ: Շուտով շրջանի վերևի գյուղեր տանող անտառամիջյան ճանապարհը թշնամին վերցրեց իր հսկողության տակ:

Ձանազան լուրերն աղավաղել էին մեր մտքերը, որ մռայլ էին, գուժաբեր՝ տղաները զոհվել են, վիրավորներ ունենք, նրանք շրջափակման մեջ են, գյուղեր կան, դատարկվել են... Ու խցանված ճանապարհներ, դատարկված գյուղերի բնակիչներ՝ կտրված, ջարդված, ճղակտոր, որ տունուտեղ թողած՝ չգիտեին՝ ուր գնալ... Ու գոհերի, անհայտ կորածների, վիրավորների անուններ են ավելանում: Եվ գյուղեր, որոնց վրա թշնամու դրոշմ է ծածանվում: Անջատված հեռախոսները ձեռքերիս՝ կապի միջոցներից կտրված:

Արցախը կուլ էր գնում՝ աշխարհից մեկուսացած, բայց չար աշխարհի հայացքի ներքո... Անհնար էր արցախցիներին հոգու կսկիծն արտահայտել, երբ մեզանից յուրաքանչյուրը յուրովի ուներ վշտի իր բաժինը՝ անսահման, անզոր, տարածական, խորապես ծանր ու աներևակայելի կսկծացնող:

Ստեփանակերտում էլ լույս չկար... Ի՞նչ անել, դեպի ո՞ր գնալ, երբ ճանապարհները՝ թե՛ դեպի Մարտակերտ, թե՛ Հայաստան,

փակված են: Եվ ահա մայրաքաղաքում հյուրընկալ ընտանիք, որ իր հարկի տակ բոլորիս պատասպարեց:

Բարձր ճնշումս արգելակում է միտքս, ու չգիտեմ՝ մեր ողբերգության ո՞ր ծայրը շոշափել, երբ ամեն տեղ ցավոտ է, բաց վերքերով, որոնք երբևէ չեն սպիանա: Սիրտ էր պայթում անզորությունից, երբ չգիտեինք, թե դեպի ուր նայել, երբ դարերով անցած նստակյաց արցախցիները քոչվոր էին դառնում: Սպասում էինք, երբ խավարով էին պատված մեր մտածումները, երբ մեզ հասած լուրերը գուժում էին անասելի՞մ՝ մահասարսուռ, սարսափազդու...

Նորացվում էր գոհերի թիվը, նորացվում էին անուններ, ու չէինք ուզում հավատալ, որ երիտասարդ կյանքերի գոհաբերությամբ պիտի «լուծվեր» Արցախի հարցը դեպի անկում:

Մենք ծնկի եկած չէինք, մեզ շամփրեցին, նետեցին գետնին՝ ոտնատակ տալով, մեզ ծեփեցին պատին, որ ուշքի չգանք: Թե մարդկային ուղեղն այս անչափելի տառապանքը որքա՞ն կարող էր իր մեջ տեղավորել, չգիտեմ, բայց թվում էր՝ մտածելու կարողությունից զրկված՝ թուղթ ու գրիչ էի փնտրում, որ շարած տողերով հույզերս թեթևացնեմ:

3

Ստեփանակերտից դեպի Հայաստան բռնագաղթի ճանապարհը երկար էր, ծանր՝ կիլոմետրերով ձգվող մեքենաներով, մեկընդմեջ մեզ ուղեկցող խցանումներով... Երկնքից թափվող անձրևը մեքենաների պատուհաններն էր թմբկահարում, որ արձագանք էր տալիս մեր հոգուն, խոցում մեր վերքոտ սրտերը:

Ամեն պահ, մտքերիս մեջ ընկած, բնակարանիս բոլոր անկյուններն են քրքրում, շոշափում այս կամ այն իր, պատերից անցնում են գույքին, այն բազմոցին, որի վրա նստում էի, այն համակարգչին, որի ստեղծաշարի վրա մատներս շարում էին տողեր, որոնք գրքեր են դարձել...

Մինչ տարիանվելը՝ նկուղից դուրս եկա, մտա տուն՝ մի քանի կարևոր իր վերցնելու: Գրքերս շոշափեցի, ցանկացա վերցնել, երկրորդաբնի մեջ ընկա, բայց թողեցի սեղանին՝ ափսոսանքով նայելով իմ տքնաջան աշխատանքի պտուղներին:

Տնից դուրս եկա՝ հազիվ զսպելով ալեկոծությունս: Սպասման մի քանի րոպեներ, ապա միանգամից մտափոխված մտա տուն, շտապ վերցրի մեկական գիրք՝ ծանր մտածումներով. «Այս վեց գրքում մանկավարժի կյանք կա, պատմական ժամանակաշրջանի արձանագրում, որ պետք է պահպանել»: Դեպի Հայաստան բռնատեղա-

հանությունը, ուզենք թե չուզենք, արցախցիներին տանում է դեպի Հակարիի կամուրջը՝ աղբբեջանական անցակետը: Մինչև հասնելը՝ հոգնած ու կոտրված հայրենագուրկներս հազար ու մի գրույցներով ծանրաբեռնված ենք մոտենում այդ կամուրջին՝ ինչպե՞ս կանցնենք, որքանո՞վ կկարողանանք տիրապետել մեզ, որ հաղթահարենք թշնամու սադրանքները, ու՞րքե՞ր կընկնեն նրանց ծուղակը, և կամ մեր դեմքին դաջված ատելությունը ինչպե՞ս կարող ենք թողարկել...

... Աղետաբեր որջից հեռացանք՝ ճանապարհը շարունակելով դեպի Գորիս դատարկված հոգով, որ Արցախը մնաց հեռվում, հայրենիքը՝ թշնամու գերության մեջ: Մտածումներս խտացած էին, այլևս երկնքից թափվող մանանա չէր երևում, երբ անծթները բազմաբայուր էին: Տեղատարափ էր, կայծակ, որոտացող երկինք, որից սարսուռն էինք...

Մեծ քաղաքում ապրելը, քաղաքի արտաքին շքեղությունը վայելելը երկի ինձ համար չեն, չնայած երեսուներկու տարի առաջ մույն զգացողությունն են ունեցել, երբ Մարտակերտը գերության մեջ էր, մենք էլ՝ փախստականի կարգավիճակով ռուսական քաղաքում:

Երեկոյան երևանն ինձ տեսանելի է դառնում լույսերի շքեղության մեջ, բազմաթիվ մեքենաների խցանումներով: Վերջինն ինձ հիշեցնում է մեր հապճեպ տեղահանությունը՝ մարդկային հոծ բազմությամբ, մեքենաների տեղաշարժի հետ կապված կանգառներով...

Ամեն ինչ հիշեցնում է հայրենիքը, որտեղ ապրել ենք մի ամբողջ կյանք: Սա կարոտ է, պոռթկացող ցավ, որ երբեմն ներսումդ կուտակում ես, երբ զգում ես, որ անհնար է հաշտվել այն իրականության հետ, որում կանք տասնյակ հազարավորներ:

Սա գլխապտույտ է, մի անհավատալի շրջադարձ, որ ապրածդ տարիների համուկոտն ես զգում, անգամ շրջափակման ծանր օրերն ես վերհիշում ու երանություն տալիս այդ օրերին: Ամենուր լույսեր են փայլվում ու փնտրում ես այդ լույսերի խտության մեջ քո բաժին լույսը, բայց չես գտնում: Ու շտապում ես վարձակալած այն բնակարանը հասնել, որտեղ մտածումներիդ ազատություն կտաս՝ թաց աչքերդ սրբելով, չմոռանալով այն բոլոր արհավիրքները, որոնց միջով անցել ես ու դեռ պիտի անցնես...

Նարայա ԳՈՂՈՍՅԱՆ
Արցախի Հանրապետության
վաստակավոր մանկավարժ

ՄԻԱՍԻՆ ԵՎ ՄԻԱԿԱՍ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՅՆ ԴԱՅՔԱՐՈՒՄ Ե ԶԱՆՈՒՆ ԱՊՐԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ

1 թ Յամերգի ամսաթիվը պատահական չէր ընտրված...

Կոմիտասի անունը կրող դպրոցը Կոմիտասի թանգարան-ինստիտուտում...

Յամերգը վարող լրագրող-դերասանուհի Շուրեյր Սարգսյանն իր խոսքը սկսեց մեկ տարի առաջ Ստեփանակերտում...

«Օրվան երկար էին պատրաստվում և որքան ծանրանում էր կյանքը շրջափակման մեջ, այդքան ավելի ոգևորված ու համառ էին ուսուցիչներն ու սաները պայքարում համերգի կայացման համար...»

Յամերգը կայացավ մոմերի ու հեռախոսների լապտերների լույսի ներքո, ինչը ի սկզբանե նախատեսված չէր...

Չեմ կարող ասել, որ նույնքան սահուն էր իմ և իմ գործընկերոջ խոսքը, երբ մենք փորձում էինք փրկել իրավիճակը...

Մեր համդիսատեսին դժվար էր զարմացնել արտակարգ իրավիճակներով, բայց ոչ նրանք, ոչ էլ մենք պատրաստ չէինք համձնվելու համագամանքներին...

Ես կանգնած էի ետնաբեմում և զարմացած նայում էի, թե ինչպես են այս երեխաներն ու պատանիները, սկսված երաժիշտներն ամեն մեկն իր մեջ ինքնուրույն որոշում կայացնում ընդունելու այս մարտահրավերը...

Վերադառնալով օրվա համերգին՝ երիտասարդ հաղորդավարուհին մեր հայրենիքի հետ տեղի ունեցած մեծագույն ողբերգությունից հետո վստահություն ներարկեց համդիսատեսին...

Էրեմ բարձրանային, միևնույն է, հաղթել են կյանքի ամենակարևոր մարտերից մեկը...

Ինչպես մեկ տարի առաջ, այդ օրն էլ բեմում երաժշտական դպրոցի բոլոր սերունդներն էին՝ ամենափոքրից՝ երաժշտական իրենց առաջին քայլերն անողներից մինչև շրջանավարտներ, վարպետներ և ճանաչված երաժիշտներ:

Յամերգի ծրագիրը հարուստ էր եվրոպական, ռուսական, հայկական դասական, ժողովրդական, ֆոլկլորային ստեղծագործություններով: Փոքրիկ և պատանի երաժիշտները տարբեր գործիքներով կատարեցին Շոպենի, Գրիգի, Պապանինիի, Գերշվիցի, Չայկովսկու, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Բաբաջանյանի և դասական ու ժամանակակից այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Յամերգի մաս էին նաև արցախյան բարբառով և Արցախին նվիրված երգերը: Առանձին համար էր նվիրված հայազգի կոմպոզիտոր, ակորդեոնահար, մանկավարժ Էդուարդ Ղազարյանցին, որն ազգի նվիրյալ էր, Արցախյան ազատագրական պայքարի առաջամարտիկ: Յենց նա է ղեկավարել Ստեփանակերտի երաժշտական դպրոցը և երաժշտական ուսումնարանը երկրի համար ծանրագույն այդ ժամանակաշրջանում: Ղազարյանցը ապագա երաժիշտներին է ժառանգել նաև հայկական երաժշտարվեստում իր ուրույն տեղն ունեցող ստեղծագործություններ, որոնցից մեկը ներկայացվեց Յամերգին:

Յամերգի անտարբեր չթուղեց ոչ մի կատարում, իսկ դպրոցի դասատու Գոհար Ալեքսանյանի կատարմամբ «Ձոն Արցախին» երգը՝ ԼԴՅ արվեստի վաստակավոր գործիչ Սիմոն Սարգսյանի նվագակցությամբ, մեր ապրումների, հույզերի, մեծագույն սիրո, նվիրումի, խիզախումի, մեր ուխտի ու երազանքների, մեր հույսերի ու կարոտի միահյուսումն է, որն այսօր ապրելու ու արարելու ուժ է տալիս:

86 տարվա պատմությունը դժվար է ամփոփել մեկ համերգով: Յամերգի կազմակերպիչները փորձել էին տասնամյակների պատմությունը տեղավորել տասնյակ րոպեների մեջ: Դպրոցի տարեգրությանը նաև լույս սփռեց 85-ամյակին նվիրված ֆիլմը:

Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի մեծագույն առաքելությունը 1938 թվականին հիմնվելուց առաջադրված շարունակվում է մնալ հայ ժողովրդի ազգային երաժշտության երախտավորների ստեղծագործական, կատարողական և գիտական ողջ ժառանգությունը փոխանցելը սերունդներին: Այսօր երաժշտության դասերը նաև մեկ ուրիշ կարևոր դեր են կատարում այս երեխաների կյանքում՝ թույլ չտալ վերջնականապես կտրվել արմատից, երբ կտրված են քո հողից:

«Արցախը կորցնելուց հետո մենք կանգնած ենք արցախյան ողջ մշակույթը կորցնելու շեմին, վտանգված է մեր մշակույթային կենտրոնների՝ այդ թվում երաժշտական դպրոցի գոյությունը», - ներկայիս մոլորակային փորձությունների և դրանք հաղթահարելու հույսի մասին լավագույնս ներկայացնում է Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Զարինե Բաբայանը:

«Երբեմն են ինքն դժվարանում են պատկերացնել մեր դպրոցի պես կառույցի լիարժեք աշխատանքը Արցա-

խից կտրված, քանի որ արժեհամակարգի հիմքում Արցախում հայկական երաժշտական մշակույթի պահպանումն է: Այսօր դպրոցը շարունակվում է իր շուրջը համախմբել տաղանդավոր պատանի երաժիշտների, սակայն դժվարանում են նկարագրել այն մեծագույն ջանքերը, որ այսօր մենք ներդնում ենք դպրոցի գոյությունը պահպանելու համար»:

Ուսուցիչները կամավոր հիմունքներով շարունակվում են դասերը՝ հանրակրթական դպրոցներին խնդրելով տրամադրել մի քանի ժամով դասասենյակ ու երաժշտական գործիքներ: Աշակերտների մեծ մասը չի կարողացել Արցախից փրկել իրենց գործիքները, ուսուցիչների մեծ մասը չունի անգամ տարրական պայմաններ՝ տանը դասապրոցեսը կազմակերպելու համար:

Այսօր երաժշտական դպրոցի գոյն մասնակի պահպանման համար դպրոցի տնօրինությունը բարի կամեցողների, կազմակերպությունների օգնությամբ է դիմել: Յամերգային ծրագրերն էլ չէին կայանա, եթե չլիներ մեծահոգի ու ազգամյուր անձանց աջակցությունը: Զ. Բաբայանը խորին երախտագիտություն է հայտնում բոլոր 5 համերգների կազմակերպման աջակցությունը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին՝ ղեկավար Աշոտ Բլեյանի գլխավորությամբ, Երևանի Կոնստանտին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցին՝ ի դեմս Էռնեստ Պիչիկյանի, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի ողջ անձնակազմին՝ ի դեմս տնօրեն Գարեգին Սարգսյանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ողջ անձնակազմին՝ ի դեմս Նիկոլայ Կոնստանյանի:

Զ. Բաբայանը վստահ է, որ լավագույն երաժշտությունը և սերունդներին կրթելու առաքելությունը շարունակվելու է համախմբել Կոմիտասի անվան դպրոցի բարեկամներին, և նրա 86 տարիների գեղեցիկ պատմությունը չի ավարտվի:

Արցախի բնակչության բռնի տեղահանությունից առաջ դպրոցում գործում էին դաշնամուրի, լարային, փողային, հարվածային, ժողգործիքների, երգեցողության բաժինները, դպրոցն ուներ 386 աշակերտ, բավարար շենքային պայմաններ, 93 բարձրակարգ, իրենց գործին նվիրված մասնագետներ, որակյալ գործիքներ: Այսօր նրանց առաջնահերթ երազանքն է՝ ունենալ իրենց տարածքը և վերագործարկել դպրոցը: Տնօրեն Զարինե Բաբայանը, չնայած ծանր վշտին (որդին գոհվել է բեմահին պայթյունի ժամանակ), իր մեջ ուժ է գտնում պայքարելու դպրոցի գոյատևման համար: «Ես ինձ չեմ ների, եթե չհասնեմ այդ նպատակին», - ասում է նա և ավելացնում, որ պատրաստ են ամեն ինչ անել, որպեսզի Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը վերաբացվի Մայր հայրենիքում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Գ.Գ. Յամերգի պատրաստ էր տպագրության, երբ համացանցում կարողացինք երկար սպասված հայտարարությունը. «Աստու կամոք և սրտացավ մարդկանց շնորհիվ Կոմիտասի անվան երաժշտական դպրոցն իր դռներն է բացում Մայր հայրենիքում: Դպրոցը կատարում է 2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն: Դիմումներն ընդունվում են հուլիսի 1-ից:

ՎԵՐԱԳՏԵԿԱԾ «ԷԼԵԳԻԱ»-Ն



1957թ. հոկտեմբերի 17-ին վախճանվում է Ավետիք Իսահակյանը: Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը տեղեկացրեց, որ 1964թ., երբ տպագրության է տրվել Շիրազի «Քնար Յայաստանի» գրքի 2-րդ հատորը, խմբագիր Գևորգ Յայրյանը կարողացել է «Էլեգիա»-ի 32 տողից ընդամենը 12-ը տպագրել գրքում: Դրանից հետո ամհայտ է եղել բանաստեղծության ճակատագիրը: Շիրազը մեքենագիր տարբերակը հանձնել է խմբագրություն, որն էլ չի գտնվել: Ս. Մուրադյանը, որը շատ մտերիմ է եղել Շիրազի հետ, կես դարից ավելի փնտրել է, որ գտնի «Էլեգիա»-ն, չի ստացվել: Բարեբախտաբար Շիրազը նույն բանաստեղծության մի օրինակ էլ 1980թ. հանձնել է Լեհիմականի այդ ժամանակվա քաղկոմի առաջին քարտուղար Դոնարա Յարոնյանին: 2023-ի ամռանը Գ. Յարոնյանյանը Շիրազի «Լարաբաղի ողբը» և «Էլեգիա» բանաստեղծությունների տպագիր էջերը պահ է տվել Գյումրիում գործող «Դպիր» հրատարակչության հիմնադիր տնօրեն, բանասեր Յովիկ Կարապետյանին: Ճանաչելով Սամվել Մուրադյանին և իմանալով, որ նա զբաղվում է նաև Շիրազի ստեղծագործությունների հրատարակմամբ՝ Գ. Կարապետյանը էլեկտրոնային փոստով բանաստեղծություններն ուղարկում է գրականագետին: Այսպիսով գտնվում է երկար տարիներ անհայտության մեջ մնացած բանաստեղծությունը:

Այս նախաբանը լրագրող Ջոհրաբ Ընթրյանի հոդվածից է: Նա մայիսի 24-ին մասնակցել է Գյումրու Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում «Էլեգիա» բանաստեղծությունը նվիրված գրական ժողովին: Այդ մասին հանգամանակից տեղեկատվությունը տեղադրվել է Lusarar.info կայքում և «Լուսարար»-ի ֆեյսբուքյան էջում:

ԷԼԵԳԻԱ

Ամնահ Ավետիք Իսահակյանին

Ով Սանթաչի անուշ հովեր, էլ չեք սիրտս հովացնի, Ա՛խ, ես հորս շունչը կուգեմ, որ իմ հույսը ծովացնի-իրավ, հայր իմ, չէ՞ որ դու դեռ Մասիսն էիր ելնելու. Դարձիր, բլբուլ, ո՞ր ես գնում, Բինգյուն ո՞ւմ ես թողնելու...

Արագածի պաղ աղբյուրներ, հուր արցունք եք այսօր թվում. Ձեր հազարան բլբուլն ընկավ. հազար տեղով սիրտս է ցավում, էլ ո՞ւմ պիտի սեր դայալայե, ա՛խ, բլբուլս ես ի՞նչ դառավ... Գինա իրավ դագա՞ղն է սև, թե՞ աչքերիս լույսը թռավ:

Սգա՛, անուգ իմ Յայաստան, ընկավ կաղնին մայր անտառիդ, Ա՛խ կտրվեց ամենատուրբ ոսկե լարը մեծ քնարիդ,- Դու էլ ամպե, իմ Արարատ, ծյունե թագղ վար խոնարհե. Ընկավ թագը հույսիս գլխից, էլ ո՞վ պիտի քեզ տուն բերե...

Էլ ո՞վ պիտի վիշտս կիսե, իմ Սևան ծովացնի, - Սևան, ավա՞ղ, արցունք դառավ բյուր աչքերում Յայաստանի: Մենակ ինչպե՞ս ծովացնեմ ցամաքածը մեր Սևանա. Մենակ ինչպե՞ս փրկեմ Մասիս, ո՞նց տուն բերեմ ծով էլ Վանա: Կարծես Անին նորից փլվեց. մի նոր Սիփան խվեց, ավա՞ղ... Ետ բերելու հույսն էլ փլվեց, մի նոր Նարեկ մտավ դագաղ:

Տիեզերքի պերճ հյուսվածքն էր՝ Նարեկացու երգի մնան, Ինչպե՞ս պիտի մի բուռ հողը ծածկե սրտիկն իր անսահման: Գայր իմ, քարերն անգամ լացին, ու քիչ մնաց Լեռն Արարատ Շղթան կտրե, Արագն անցնի, ծունկի իջնի, ողբա վրադ...

Բայց, ախ չէ՞ որ մենք դեռ անհաս Մասիս էինք բարձրանալու, Մեկտեղ էինք Մասիսն ի վեր՝ այրվող սրտներս հովին տալու,- Թե ինձ թողիր քնարն հայոց, Մասիսն ո՞ւմ ես դու թողնելու, Մի՞թե ես էլ պիտի մեռնեմ՝ առանց Մասիս բարձրանալու, Վշտիս հուրը ծով կուլ կտա՞ր՝ ցավս այն հողն է բովանդակ, Գավատում եմ, սակայն վաղվան, Կհովանա վիշտս վայրագ՝ Գայոց վշտի հրաբուխը լուկ Մասիսի սուրբ ծյունի տակ...

Թեկուզ հազար տարի անցնի, աշխարհ կզանք մենք միասին՝ Գայոց թագը պիտի տեսնենք դրված այնտեղ՝ Մեծ Մասիսին:

Գովհաննես Շիրազ 17. 10. 1957թ.

ՄԱՐԶԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

ՏԻՊՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԶՎՈՏՐՎԵԼ, ԶՎՈՐԾԱՆՎԵԼ, ԱՊՐԵԼ ՈՒ ԱՐԱՐԵԼ ԱՐՃԱՆՅԱՆ ՈՂՈՎ



Ծնվել է - հոկտեմբերի 21, 1992թ., Արցախ, Ստեփանակերտ:

Մարզաձևը - ավանդական կարատե-դո: Այսին է պարասյել - 3 տարեկան էր, երբ հաճախում էր պարապմունքի, 6 տարեկանում հանձնեց առաջին քննությունը: Կարգախոսը - «Ինքնաճանաչում, ինքնագրգռում»: Զեռքերումները սպորտում - Արցախի ավանդական կարատե-դոյի ֆեդերացիայի մարզիչ, սեւ գոտի երրորդ դաս, ավանդական կարատե-դոյի 33 բազմակի չեմպիոն, Եվրո-

պայի չեմպիոն, աշխարհի գավաթի մրցանակակիր, աշխարհի առաջնության փոխչեմպիոն:

Մասնագիտությունն ու աշխատանքը - ֆիզիկուլտուրայի ուսուցիչ, մարզիչ:

Միտքը և գրադրվել - մարտարվեստով, քանդակագործությամբ:

Կյանքում ամենից շատ արժևորում է - ընտանիքը:

Մարզիկը պետք է լինի - աշխատասեր, նպատակասույց, ինչը զրկում է ազատ ժամանակից, բայց տալիս է արդյունք:

Նրա համար օրինակելի մարզիկները - կարատեի վարպետները, որոնք նույնիսկ մեծահասակ ժամանակ գտնվում են ֆիզիկական եւ մտավոր զերազանց վիճակում, ինչն արտահայտվում է նրանց կողմից անցկացվող սեմինարների ժամանակ եւ առհասարակ կյանքում:

Ընտանեկան կարգավիճակը - ամուսնացած է, երկու երեխայի հայր:

Վնասվածքը - 2017թ. Նորչեմբեր (Արցախ) կայացած մրցման ժամանակ ստացել է ուսի (անրակի հողախախտ) վնասվածք, որից հետո յոթ ամիս դադարեցրել է պարապմունքները մարզադահլիճում, բայց շարունակել է պայքարն իր ներսում: Դադարեցրելով բացասական հույզերը, թույլ տեղերն ու ցավը վերականգնվել է եւ 8-րդ ամսում արդեն հաճախել պարապմունքի: Դրսեւորելով կամքի ուժ եւ նպատակասույցություն՝ հարթահարել է հետվնասվածքային ծանր շրջանը եւ երեք ամիս ամենօրյա պարապմունքով ոչ միայն ապաքինվել է, այլև իր ֆիզիկական ցուցանիշները նորմայից բարձրացրել: 2018-ին

մասնակցել է 33 միջազգային առաջնությանը եւ մրցանակային տեղ գրավել:

Մտնեցումը - կարատեում, ինչպես կյանքում ամեն բայլ կատարել գիտակցված: Ամեն պարապմունքի ճանաչել մարզիկի հոգեբանությունը, աստիճանաբար պատրաստել ֆիզիկական (մկաններ), տեխնիկական (ուղեղի եւ մկանների համատեղ աշխատանք), ուղղորդել ինքնաճանաչման (ճիշտ շնչառություն, ինքնակառավարում, բացասական հույզերի հաղթահարում):

Մարզիչը պետք է լինի - օրինակելի անձնավորություն իր աշակերտների համար: Մարզիչը դաստիարակում եւ ձեւավորում է երեխային, իսկ երեխաները հիմնականում ընդօրինակում են իրենց մարզչին, ուզում են նմանվել նրան: Մարզչին իր հավասարակշռությամբ, հույզերի արտահայտմամբ, խոսելու տոնով, զանազան օրինակներ բերելով, ֆիզիկական, տեխնիկական մեծ գիտելիքների ու բարոյական արժեքների կրողը լինելով՝ պետք է օրինակ ծառայի սաների համար, քանի որ հենց դա էլ կարող է լավ մարդ լինելու հիմքը դառնալ յուրաքանչյուր սանի համար: Մարզիչը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ, ձգտում, իմաստունություն ու նվիրվածություն: Մարզիչ միանգամից չեն դառնում: Մեծ վարպետներին բնորոշ համեստությամբ՝ սենսե Տիգրանն իրեն կայացած մարզիչ դեռ չի համարում. պետք է անընդհատ սովորել, ձգտել ու զարգանալ:

Արցախից - Արցախից լինելը որոշ տեղ դժվարացնում է, բայց միեւնույն ժամանակ ուժ է տալիս: «Բռնի տեղահանվելուց հետո ստիպված ենք դառնալ ավելի իմաստուն, քանի որ սկսում ենք նոր ճանապարհից նոր կյանք:

Պետք է ստեղծենք ու արցախահայության ավանդույթները պահպանենք մեր իսկ 3-աստան աշխարհում»:

Բռնատեղահանվելուց հետո - 3-րդ արժանավոր մտավոր եւ ֆիզիկական դժվարությունները, որոնց առնչվել է գաղթից հետո՝ կարողացավ նոր ուժ գտնել ու 3-աստանում ծավալել մարզչական գործունեություն, բացեց կարատեի դպրոցներ Երեւանի ծայրամասերում եւ մայրաքաղաքից դուրս՝ Արվյան քաղաքում: Պարապմունքների սկսել են հաճախել մեծ մասամբ Արցախից բռնատեղահանված երեխաներ ու մեծահասակներ՝ իմանալով, որ իրենց մարզիչը վերաբացել է կարատեի խմբակներ 3-աստանում: Մարզիկների ոգեւորությունն ու պարապմունքների հաճախելու մեծ տրամադրվածությունն իր արձագանքն է գտել մարզչի սրտում՝ մոտիվացիայի նոր ալիք բացելով նրա մեջ:

Առաջիկա ծրագրերն ու նպատակը - Նորաբաց ակումբներ են հաճախում ու մարզվում շուրջ 50 արցախցի մարզիկներ, ինչպես նաեւ տեղացի աշակերտներ: Նպատակ ունեն գարգացնել ու մասսայականացնել Արցախի ֆեդերացիայի մասնաճյուղերը, համախմբել արցախահայությանը, ինչպես փոքրերին, այնպես էլ մեծերին ընդգրկել առողջ ապրելակերպի գաղափարի ներքո, պահպանել արցախյան բարբառը: Նախատեսվում է մրցաշարերի, միջոցառումների, ճամբարների կազմակերպում՝ համախմբվելով մեկ գաղափարի շուրջ. չկոտրվել, չկործանվել, ապրել ու արարել արցախյան ոգով:

ՎԱՐՈՂԵՍ ՄԱՆԱՅԱՆ. ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ՝ ԱՆՆԱԿՆԵՐ

Գաղտնիք չէ, որ արցախցի մարզիկներն աչքի են ընկնում բարձր ոգով ու տարբեր մարզաձեւերում՝ հատկապես արեւելյան մարտարվեստներում իրենց լավագույնս դրսեւորելով: Խոսքը վերաբերում է ոչ միայն հայրենիքում, այլև երկրից դուրս տարբեր մրցահարթակներում արցախցի մարզիկների մեծ հաջողության հասնելուն: Ամվանի մարզիկ Վարդգես ՄԱՆԱՅԱՆն է «Լուսարար»-ի մարզական էջի ուշադրության կենտրոնում:

Ծնվել է 1992թ. ապրիլի 25-ին Ստեփանակերտում: Ավարտել է մայրաքաղաքի 9-րդ դպրոցը, այնուհետև ընդունվել ԱրՊՅ նախնական զինվորական պատրաստության բաժինը: 2010-12թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայությունը ԱՅ ՊԲ շարքերում:

1997-98թթ. Վարդգեսը, ինչպես եւ իր հասակակիցներից շատերը հետաքրքրվեց արեւելյան մարտարվեստներով եւ սկսեց պարասպորտի հաճախել այն ժամանակ ուշու-քունգֆու մարտարվեստ սովորեցնող թերեւս միակ կառույցում՝ Հայ Սեւ Գոտիների Միությունում (Հ.Ս.Գ.Ս.): 6 տարեկանից ծանոթանալով ու յուրացնելով քունգֆուի հմարները՝ Վարդգեսը ստացավ նաեւ հայրենասիրական ու մարտական գաղափարներով լեցուն դաստիարակություն, ինչը Միության առաջնային նպատակն էր: Մարզումներն անց էր կացնում սփյուռքահայ մարզիչ Հարութ Բերբերյանը: Տարիներ անց, երբ արդեն Միության լավագույն մարզիկներն էին մարզչությամբ զբաղվում, Վարդգեսը շարունակեց մարզվել Սայաթ Բաղդասարյանի մոտ: Տաղանդավոր մարզիկն իրեն լավ էր դրսեւորում նաեւ սանդա ուշու մրցաձեւում եւ շուտով սկսեց մրցույթների մասնակցել:

Բազմիցս հռչակվել է Արցախի եւ Հայաստանի սանդա ուշուի չեմպիոն: Մարզական լավ տվյալների ու մարզաձեւին լավ տիրապետելու շնորհիվ դարձել է միջազգային մրցաշարերի, Կովկասի առաջնության, Եվրասիայի առաջնության չեմպիոն: Միտքը մարտարվեստը՝ Վարդգես Մանասյանը շարունակել է անընդհատ մարզվել եւ մեծ հաջողության է հասել նաեւ մեծահասակների շրջանում: 2014 թ. հռչակվել է Եվրոպայի մեծահասակների քունգֆուի առաջնության չեմպիոն:

2014թ. Արցախի մարզական կյանքում իսկական ցնծություն էր. Վարդգես Մանասյանը Զինաստանում մասնակցել էր աշխարհի առաջնության եւ զերազանց հանդես գալով՝ դարձել աշխարհի չեմպիոն: Մարզական վերելու-ծաբաններից ոչ մեկը չէր կարող անտարբեր լինել այն փաստի հանդեպ, որ արցախցի մարզիկը ելույթ է ունեցել ուշուի հայրենիք Զինաստանում ու նրան հաջողվել է հաղթել ուժեղագույն մրցակիցների՝ հռչակվելով աշխարհի չեմպիոն: Ամփոփելի է, որ արցախցի մարզիկները հանդես գալով արտասահմանյան մրցահարթակներում՝ միշտ տարբերվել են իրենց բարձր ոգով ու լավ պատրաստվածությամբ, ինչն էլ հարեւան ու թշնամի պետությունների կողմից հաճախ նախանձի տեղիք է տվել, իսկ շատ դեպքերում էլ արցախցի մարզիկները օրինակ ու ոգեւորության առիթ են հանդիսացել հաղթանակի ձգտող մյուս մարզիկների համար:

Վարդգես Մանասյանը շարունակել է մարզվել եւ կարողացել է հաղթողի տիտղոսը պահել նաեւ 2016-

ին: Մինչ դա 2015թ. Զինաստանում մասնակցել էր քունգֆուի առաջնությանը եւ արժանացել երրորդ մրցանակային տեղի, իսկ 2016-ին ՌԴ-ում կայացած աշխարհի քունգֆուի առաջնությունում նվաճել է հաղթողի տիտղոսը, նույն ժամանակ մասնակցել սանդա ուշուի Եվրոպայի առաջնության եւ գրավել 2-րդ տեղ: 2018թ. Մոսկվայում մասնակցել է

վել 2016-ին: Նրա աշակերտներին նույնպես հաջողվել է լավ արդյունք ցույց տալ եւ ապացուցել, որ դժվարությունները հաղթահարելու համար են, ոչ թե դրանց առջեւ նահանջելու:

Ուշագրավ էր 2022թ. դեկտեմբերի սկզբին արցախցի մի խումբ մարզիկների ուշուի մրցման մեկնելն ու տուն վերադառնալու դժվարությունը: Ինդոնեզիայում կայացած սանդա ուշուի պատանիների աշխարհի առաջնությանը մասնակցած Վարդգես Մանասյանի սանը զբաղեցրեց 3-րդ մրցանակային տեղը, սակայն այս օրերին փակվեց Հայաստան-Արցախ միակ ճանապարհը, որն էլ հանգեցրեց հետագա ողբերգական իրադարձություններին: Հայաստանում մնալու կամ վտանգավոր զարտուղի ճանապարհով տուն վերադառնալու տարբերակներից արցախցի մարզիկները նախընտրեցին երկրորդը, եւ բարեբախտաբար կարողացան տուն հասնել: Դրան հաջորդեցին շրջափակման պատճառով առաջացած դժվարությունները, մարզումների համար անբարենպաստ պայմանները, որոնք մեծամասամբ հաղթահարվում էին: Վարդգես Մանասյանն Արցախում ուներ շուրջ 50 սան, որոնց մարզում էր ոչ միայն Ստեփանակերտում, այլև Արցախի սահմանները գյուղերում:

Արցախից բռնատեղահանվելուց հետո Վարդգես Մանասյանն այն եզակի մարզիչներից է, որը կարողացել է արագ համախմբել իր շուրջը մարզիկներին ու շարունակել մարզել: Թեւեւ մարզումների համար Երեւանում գտնվող տարածքն այն-

քան էլ նպատակահարմար չէ (պարապում են նկուղային տարածքում), այնուամենայնիվ կարելու է, որ չեն դադարում մարզվել, ու դեռ ավելի՛ն՝ նրա սան Դավիթ Իսախանյանը (60 կգ ք.կ.) 2023թ. դեկտեմբերին (Թուրքիայում մասնակցել է մեծահասակների միջեւ սանդա ուշուի Եվրոպայի առաջնությանը եւ արժանացել 3-րդ մրցանակային տեղի:

2024թ. Եվրոպայի մայրաքաղաք Ստոկհոլմում կայացած սանդա ուշուի Եվրոպայի առաջնությունում արցախցի ուշուիստները, մասնակցելով 3-րդ ուշուի հավաքական կազմում, դարձել են չեմպիոններ: Հատկանշական է, որ մրցումի մեկնած չորս հոգանոց մարզիկազմում երկուսը արցախցի ուժեղագույն մարզիկներն էին: Վարդգես Մանասյանի սան Դավիթ Իսախանյանը այս անգամ մասնակցել էր 56 կգ քաշային կարգում, իսկ ուժեղագույն մարզիկ Արսեն Բաղդասարյանը՝ 60 կգ քաշային կարգում:

«Արցախից տեղահանված մարզիկներին պետք է շատ ուշադրություն դարձնել: Մարզվելու համար պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն, ունենք մարզադահլիճի, գույքի խնդիր, սակայն մեր մարզիկները չեն դադարում պարասպել: Այն, ինչին հասել ենք, կարողացել ենք ձեռք բերել մեր ուժերով: Եթե լինեք պետական աջակցություն կամ ցանկացող որեւէ անհատ կարողանար ինչ-որ չափով օգնել մեզ, այդ դեպքում ավելի հեշտ կլինեք մեր մարզիկների համար պահպանել իրենց մարզական բարձր տիտղոսները: Գաղտնիք չէ, որ արցախցի մարզիկները ուժեղագույն են սանդա ուշու մարզաձեւում», - ասել է սաների մարզական ճակատագրով մտահոգված Վարդգես Մանասյանը:



«Աստղերի» առաջնության՝ կրկին զբաղեցնելով 1-ին տեղը: Սակայն ստիպված էր եզրափակել մրցույթների մասնակցելը, քանի որ ծեռքի վնասվածք էր ստացել: Մինչդեռ եթե մրցումների մասնակցել այլևս չէր կարող, ապա մարզչական գործունեությունը դարձավ նրա կյանքի ուղեկիցը: Նպատակասույց, ուժեղ ու պարտաճանաչ մարզիկը սկսել էր մարզչական աշխատանքով զբաղ-

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ԲՈՒՐՆԵԼ ԵՆ ԼԵՈՒՆ ԳԱԳԱԹԸ

«...յարևանքից Սրկղոսից լեռանց, կայ ամայի Պաշքենտ՝ ունենալով ի հարաւոյ նույնպէս ամայի և աւերակ բերդ համանուն՝ ի միջոցի կրկին ուստոց լեռանց ...բլուրն այն մեծամեծ վիճօք պատեալ և անրացեալ՝ այժմեան աւերակն է Պաշքենտ բերդի և նոյն դարձեալ Բոլորաբերդ կոչեցեալ երբեմն...»:

Ղևոնդ Ալիշան. «Սիսական», Վեներտիկ, 1986 թ., էջ 130

12-րդ դարավերջին հայ իշխաններ Ջաքարե Բ ամիրսպասալարը և Իվանե Ա արքայի Ջաքարյանները գլխավորում էին հայ-վրացական միացյալ ուժերը թուրք-սելջուկներից մեր երկիրն ազատագրելու պատերազմներում: Նրանց հաջողվեց հաղթել թշնամուն, և Սյունիքը տրվեց Օրբելյաններին: Ներքին հաշտնում էլ հայ իշխանները, ոգևորված Ջաքարյանների հաղթանակով, ոտքի ելան և ազատագրեցին իրենց հայրենիքը: Արցախի Առաջնահիվ նախարարական տոհմի հետնորդներից Կասակ հաղթականը և նրա 3 որդիները՝ Պապաքը, Սկղեմն ու Պռոշը, որոնք նույնպէս մասնակցում էին սելջուկներից հայրենիքն ազատագրելու կռիվներին, աչքի ընկել իրենց խիզախությամբ, Ջաքարյանների կողմից որպէս «արեանգինք», 1201-1203 թվականներին ժառանգական տիրակալության իրավունքով նոր տարածքներ ստացան Գառնիի կողմերում ու Վայոց Ձորում: Վասակը նշանակվում է կուսակալ՝ «ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ»: Այս մասին հիշատակում է մատենագիր, պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաստեղծ, երգահան Մխիթար Այրիվանցեցի (1224-1290. թաղված է Այրիվանքում՝ իր ճգնարան-քարայրի շենքին): Ամրանալով Վայոց Ձորում՝ հաղթականներն սկսում են տարածքի շենքերը բարեկարգել, պաշտպանական ամրություններ կառուցել: Վայոց Ձորի եղեգնածորի տարածաշրջանի ներկայիս Վերնաշեն գյուղը՝ պատմական Սրկղոսը, դարձնում են իշխանական նստավայր, չնայած տարածքներ ունենն մասնաջրերը տարբեր մահանգներում: 1223թ. Վասակին փոխարինել է կուսներ որդին՝ Պռոշը, որի մասին մատենագրության մեջ հիշատակվում է՝ արի ու հմուտ զորավար, պետական ու ռազմական ականավոր գործիչ: Պռոշը 61 տարի, մինչև 1284թ. վարել է Ջաքարյանների բանակի սպարապետի պաշտոնը: 1228-ին նա ջարդել է Ջալալ-էդ-Դինի խորեզմյան հրոսակներին և ազատագրել Դվինը, իսկ մոնղոլների օրոք բազմաթիվ արհուրախներն էլ գործել, որի համար գովերգվել է XIII դարի բանաստեղծ խաչատուր Կեչառեցու տաղերում: Պռոշի անունով իշխանական այդ տունը հետագայում կոչվել է Պռոշալու: Խաղբակյանները Պռոշյանների հովանավորությամբ հիմնվել ու կառուցվել են նաև վանքեր ու եկեղեցիներ, որոնցից արժանահիշատակ է Գեղարդի վանական համալիրը: Արդև Մեծ իշխան՝ Պռոշը, դաշնակցեղով մոնղոլ զորավար Բաչու խանի հետ, միասին 1258թ. փետրվարի 1-ին գնացել են Բաղդադի վերջին խալիֆ Մուստաֆայի մոտ՝ պահանջելով նրանից հանձնվել առանց կռվի: Հետագա երկու տարին Պռոշ իշխանը մասնակցել է Տիգրանակերտ բերդաքաղաքի պաշարմանը և հաղթել: Մատուցած մարտական ծառայությունների համար մոնղոլները Պռոշ իշխանին նվիրել են հողեր, սարուկներ և փող: Բացի դրանից, նա մասնակի ազատվել է հարկեր վճարելուց: Եվ այս հզոր իշխանը նաև զբաղված էր երկիրը շենացնելու գործերով:

Ներկայիս Վայոց Ձորի մարզի

Վերնաշեն գյուղից մոտ 7կմ հյուսիս-արևելքում՝ Սրկղոսը ծորահովտում է գտնվում Հայոց միջնադարյան հզոր ամրոցներից մեկը՝ Բոլորաբերդը, որն առավել հայտնի է Պռոշաբերդ անունով: Սա խոսում է այն մասին, որ Բոլորաբերդ-Պռոշաբերդը կառուցել է Վասակ հաղթականի որդին՝ Պռոշը, և որի անունով էլ ամրոցը կոչվում է: Ամրոցի ամվան հիշատակությունը պահպանվել է 1475թ. գրված Աբրահամ Բոլորածորի ծաղկողի ծեռագիր Ավետարանում, ըստ որի այն պատկերագրողվել է Թանատ-Գլածոր վանքից ոչ հեռու գտնվող Բոլոր-բերդում: Վերջերս հնագետներ Գագիկ Սարգսյանի, Լևոն Մկրտչյանի և ամերիկահայ Գևորգ Խրիմյանի հետ բարձրացանք Պռոշաբերդ-Բոլորաբերդ, որը տարածքի ամենաբարձր լեռներից մեկի վրա է: Քարքարոտ ու ոլորապտույտ ճանապարհը դժվարանց չի թվում, քանի որ մշտապես գեղեցիկ տեսարաններ են բացվում աչքիդ առաջ: Վերջապես երևում են Բոլորաբերդը պահող լեռը, իսկ ձախում փոսորակի մեջ՝ Սպիտակավոր վանական համալիրը: Ամրոցն իր վրա պահող, ծովի մակերևույթից 2912մ բարձրությամբ լեռը կոչվում է Թաքեղոնդուրան: Ներքևից էլ երևում են սարի գագաթը բոլորած պարիսպները: Ներքևում կա ցուցանակ, որ Պռոշաբերդը կառուցվել է 5-րդ դարում: Այս մասին ցուցանակ տեղադրողները վկայակոչում են 13-րդ դարի պատմիչ Ստե-



փանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքից հետևյալ տողերը՝ կապված Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկների կողմից հայկական ջոկատներին հետապնդելու հետ. «Հասնելով Վայոց Ձոր գավառի մեջտեղը, եղեգիս և Սոնգան գետերի միջև գտնվող քարաժայռերով պատած բլրի մոտ, տեղի ամրության պատճառով, մեծ արյունահեղություն սրեցին... Իսկ մյուսներին հետապնդեցին և նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ծորակի մեջ՝ այնտեղ կոտորեցին ...Հենց այնտեղ էլ կոչվեց Անգեղածոր: Եվ այստեղից արշավելով վրա հասան երեք հարյուր մարդու Ռստինք և Արտաբույնք կոչված գետախառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին. ... Եվ պարսիկներն այնտեղից մի փոքր անցան դեպի ծորաբերանը, որը ձախ կողմից մի քիչ վեր նայում է Ցախաքար կոչված սուրբ վանքին ...» (Երևան, 1986 թվական, էջ 107-108): Բայց պատմիչի հիշատակած Ցախաքար քար վանքը գտնվում է ոչ թե Պռոշաբերդ-Բոլորաբերդի, այլ Սմբատաբերդի հարևանությամբ: Կարծում են՝ իրավատու մարմինները պետք է հետևություն անեն և ճիշտ ներկայացնեն պատմական եղելությունները: Ստ. Օրբելյանը հիշատակում է նաև Արտաբույնք գյուղի մասին, որի միջով հոսում է Եղեգիս գետի վտակ Էլեգիսը: Գյուղի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սյունյաց տան

իշխան Սմբատի անունով կոչվող Սմբատաբերդը՝ կառուցված 12-րդ դարում: Իսկ Ցախաքար քար վանական համալիրը, որ կառուցվել է Աբբաս Բագրատունու օրոք 10-րդ դարում, գտնվում է Սմբատաբերդի դիմաց՝ հյուսիսարևելյան կողմում: Պռոշաբերդը Սմբատաբերդից հեռու է մոտ 7կմ: Եվ Պռոշաբերդն իր վրա պահող լեռան հյուսիսային լանջով բարձրանում ենք, իսկ վերևում գտնվող բավականին լավ պահպանված պարիսպները ձգում են ու ձգում: Պատահաբար չէ, որ 13-րդ դարում Պռոշ իշխանն իր իշխանությունն առավել ուժեղ պահելու, հայրենիքը պաշտպանելու համար ընտրել է Թաքեղոնդուրան լեռը, որի լանջերին կան բնական ամրություններ՝ ուղղածից ժայռեր, որոնցից վերև էլ արդեն պարիսպներն են: Լեռան լանջը հարուստ է նաև բուսականությամբ: Տարբեր ծաղիկների մեջ առավել աչքի են ընկնում վառ կարմիր գույն ունեցող ալպիական մալուշակները: Ավանայից հիշում են Բակուցի «Ալպիական մալուշակ»-ը: «Ցող կաթեց ալպիական մալուշակի ծաղկաթերթերի վրա: Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առեքների մեջ և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մալուշակ...»: Այս ծաղիկը կոչվում է նաև՝ Եղբայրա տուն (լ ա տ . . . Diphelypaea), աղբերաց ար-

յուն, որը Ալիշանն իր «Հայրենասկ» աշխատությունում նկարագրում է. «...և ծաղկանց թագաւոր կամ թագուհի կըրնանք ըսել, զոնէ մեր երկրին մէջ. մեզի պանծալի, օտարաց նախանձելի, և ամենուն գնալելի իր գունդին համար»: Բավականին թեթև լեռնամալուշակ բարձրանում ենք ու վերջապես հասնում ամրոցի պարիսպների տակ:

Ոչ մեծ ու կուպտատաշ բազալտաքարերից առավելապես հորիզոնական ուղղությամբ տեղադրված ուղղանկյուն քարերից, կրաշաղախի միջնաշերտով կառուցված պարիսպները, 5 հզոր աշտարակները պահպանվել են հիմնականում: Ամրոցի հիմնական մուտքը եղել է արևմտյան կողմից. պահպանվել է սրբատաշ բազալտից կամարը, նշմարվում է պատմական ճանապարհի հետքը: Լեռան գագաթը, որի վրա է ամրոցը, պատված է յոթանիստ անկյուն ունեցող պարիսպներով: Հարավ-արևելյան կողմի անկյունը 90 աստիճան է և միակը, որն ամրացված չէ բուրգով: Հնարավոր է՝ բուրգը ժամանակի ընթացքում քանդվել է: Այս հատվածում՝ պարիսպներից ցած ժայռեր են, որ նաև եղել են պատվար, և որոնց վրա հսկել են Պռոշ իշխանի քաջարի զինվորները: Պահպանված ամրոցապատերի ընդհանուր երկարությունը մոտ 120 մետր է: Պարսպապատերի փակ օղակից դուրս հյուսիսարևելյան կողմում կա առանձին ոչ բարձր պարսպաշար՝ մոտ 10 մ երկարությամբ: Իսկ հյուսիսային մասում կա-

ռուցվել է պարսպի առանձին կանգնած մի գոտի, որի մնացորդները պահպանվել են մոտ 13 մ երկարությամբ և 2,5-3 մ բարձրությամբ: Լեռան բարձունքից ողջ տարածքն ափի մեջ է: Հարթությունում փռված է Եղեգնածոր քաղաքը՝ Վայոց Ձորի մարզկենտրոնը: Հեռվում նաև Մա-

լիսներն են երևում: Ամրոցի հյուսիս-արևելյան կողմում՝ ծովի մակերևույթից մոտ 3000մ բարձրությամբ Ղազմա կոչվող (կանանց գլխազարդ) սարի ստորոտում, բնակատեղի է պահպանվել. երևում են տների ավերակներ: Ամառային եղանակներին ընդհանրապես դժվար է հնավայրում աշխատել: Առատ բուսականությունը խանգարում է. ծածկված են ամրոցի ներսի դարավոր շինությունների հիմքերն ու պատերը: Բայց զգացվում է, որ պարիսպներից ներս ժամանակին բազում շինություններ են եղել, որոնց շարքում նաև ջրամբարներ կան: Նման դիրքերում գտնվող ամրոցներում առավել կարևոր է առատ ջուր ունենալը: Լեռան գագաթին նույնպես մեծ-մեծ ժայռաբեկորներ կան, որոնք ժամանակին օգտագործվել են նաև որպես շինաքար, և պարսպի քարերն այդ ժայռաբեկորներից են կտրել միջնադարի հմուտ վարպետները:

Իջնում են ցած ու անցնում ամրոցի պարիսպների տակով: Հիմնական մուտքի ձախակողմյան պարիսպների արտաքին քարերը թափվել են: Հարավային պարիսպները լավ են պահպանվել: Երևում է՝ այս կողմում նույնպես ամրոցը մուտք է ունեցել: Կանգուն են նաև բուրգ-աշտարակները, որոնց վրա նույնպես ժամանակին Պռոշ իշխանի զինվորներն էին հսկում ու հարկ եղած ժամանակ դիմակայում թշնամուն: Արևելյան հատվածի պարիսպներն ամբողջովին տեղում են. պարզապես կարելի է հիանալ մեր նախնիների վարպետությամբ: Բուրգ-աշտարակների որոշ հատվածներ քանդված են, բայց դրանք իրենց տեղում են ու ամուր: Պարիսպների վերին հատվածի քարերը կարմրավուն են, որ առավել են գեղեցիկ դարձնում ճարտարապետական հորինվածքը: Բոլորաբերդի մասին Քաջբերունին գրել է. «Գագաթը երեք կողմից ժայռապատ է. իսկ հյուսիսից ունի կրապատ պարիսպ: Այս կողմում պարիսպները երկուսն են. ստորին և վերին: Վերջինը կրապատ քարաշեն է, մի քանի տեղ քանդված: Բերդի գագաթի հարթությունը մեծ չէ, մոտավորապես 50 մ տրամագիծ ունի: Բերդի ներսում եղել են 40-50 կրաշաղախ սենյակներ, ջրավազան և հորեր»: («Արարատ» հանդես, թիվ 1, էջ՝ 96): Հյուսիսային պարսպի մի հատված նույնպես քանդվել է: ժամանակի ընթացքում Ամրոցի ներսի շատ շինություններ հողի տակ են անցել, երևում են կիսով չափ: Տեղ-տեղ նաև հորեր ու այլ փոսորակներ կան պարիսպներից ներս:

Լևոն Մկրտչյանը դրոնով նկարահանումներ է կատարում: Վերջացնե-

լուց հետո իջնում է ցած, միասին ուսումնասիրում ենք ներքին պարիսպները, որոնք նույնպես հիմնականների ոճով են կառուցված: Տարածքում ավելի հին շրջանի կառույցներ չեն երևում: Հյուսիս-արևելքից ամրոց, հնարավոր է, նույնպես ճանապարհ է բարձրացել. հետքերն զգացվում են: Վերջացնելով նկարահանումները, ուսումնասիրությունը՝ իջնում ենք ցած և շարժվում Սպիտակավոր Սուրբ Աստվածածին վանական համալիր, որը գտնվում է Բոլորաբերդի արևմտյան կողմում՝ մոտ 1,5 կմ հեռավորությամբ վրա: Փոքր վանական համալիրը կառուցվել է ժամանակի նշանավոր մանրանկարիչ, քանդակագործ ու ճարտարապետ Մոմիկի (մահացել է 1333թ.) նախագծով: Կանգնեց միակ եկեղեցին ունի գավիթ ու զանգակատուն: Պահպանվել են նաև վանքը շրջապատող պարսպի հիմքերը: Եկեղեցին ունի գմբեթավոր հորինվածք: Ավագ Խորանի 2 կողմում կան ավանդատներ: Ըստ եկեղեցու պատերին եղած արձանագրությունների՝ վանքը հիմնադրել է Պռոշի որդին՝ Էաչի իշխանը, ով ամուսնացել է Էլիկուն Օրբելյանի դուստր Մամախաթունի հետ: Այս ամուսնությամբ միավորվել են Սյունիքի երկու խոշոր իշխանական տոհմերը: Էաչին մահացել է 1318 թվականին, և վանքի շինարարությունը 1321-ին ավարտել է նրա Ամիր Հասան անունով որդին: 1338թ. Գագաթի համալսարանի գործունեության դադարից հետո Սպիտակավոր վանքը դառնում է Պռոշյանների կրթամշակութային կենտրոնը, որտեղ նաև ծեռագրեր են ընդօրինակվել: Օրբելյանները 1339թ. վանքին նվիրաբերել են ընդարձակ այգիներ: Կանգնեց նեղ մուտքն արևմտյան կողմից է: Ներսի կողմում՝ մուտքից վերև, պահպանված է մի բարձրաքանդակ. երկու հոգի պահում են եկեղեցու փոքր կրկնօրինակը: Ենթադրվում է՝ հայր և որդի Պռոշյաններն են:

Ինչպես Հայոց շատ վանական համալիրներ, այնպես էլ Սպիտակավոր Սբ. Աստվածածինը թալանվել, ավերվել է Լենինքեմուրի արշավանքների ժամանակ: Ավելի ուշ, դիմակայել է 15-րդ դարի թուրքմենական ցեղերի ասպատակություններին: 1987թ. Սպիտակավոր վանքում ամփոփվել է Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը: Դրանից հետո ամեն տարի հունիսի 17-ին, այլ օրեր, հատկապես՝ ապրիլի 24-ին, ուխտագնացություն է տեղի ունենում դեպի Սպիտակավոր Սբ. Աստվածածին եկեղեցի:

Օրվա ընթացքում այցելեցինք նաև Եղեգնածորի տարածաշրջանի Հորս գյուղ, որտեղ է գտնվում իշխան Չեսար Օրբելյանի պալատի ավերակը: Այստեղ և կից եկեղեցու տարածքում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախումբը, պ.գ.թ. Ավետիս Գրիգորյանի ղեկավարությամբ, պեղումներ ու հնագիտական այլ աշխատանքներ էին կատարում: Հողաշերտից մաքրվել են 14-րդ դարի պալատի և հարակից եկեղեցու ավերակները: Սրբատաշ քարից ու կրաշաղախով կառուցված իշխանական ապարանքը բաղկացած է եղել երկու մասից՝ բուն տունը և դրա առաջին սրահը: Ծածկված է եղել փայտյա գեղանկերով, որոնք հենվել են չորս քարե սյուների վրա: Հողաշերտի տակից բացվել են նաև սյուների խարխիվները, այլ բեկորներ: Ավերակ մատուռ-եկեղեցու պեղումներից հայտնաբերվել է արձանագրություն:

